

10-11(548-549)
30.03.2019
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ զխրատը, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԻՐԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԻՐ

Lusarar

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐՈՒԺԸ ԲԱՅԱԶԱՅՏԵԼՈՒ ՆՈՐ ՀԱՄԱՏԵՂ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



Արագ փոփոխվող ներկա ժամանակաշրջանում մեր տարածաշրջանին անհրաժեշտ է ավելի արագ զարգացում, իսկ ասվածը կյանքի կոչելու կարևորագույն պայմաններից մեկը երիտասարդ սերնդի շրջանում ուժեղ առաջնորդների բացահայտումն ու զարգացումն է: Այս առումով ապագա առաջնորդները հարկ է հաղորդակցվեն տեսաբանների ու պրակտիկ գործիչների մտքերի և փորձի հետ: Այս նպատակին էր միտված Երիտասարդ առաջնորդների միջազգային դպրոցի ներկայացուցիչների այցն Արցախ: Այս անգամ տեղի երիտասարդների համար երկօրյա դասընթացներ կազմակերպեցին:

Խմբի ղեկավար ու դասընթացավար Ռուզաննա Աթաբեկյանի խոսքով՝ արցախյան երիտասարդության համար նման ձևաչափով հանդիպում անցկացնելու գաղափարը կազմակերպիչների մոտ ծագել է դեռ նախորդ տարի: «Եկել ենք, որ կիսվենք մեր գիտելիքներով,- ասաց Ռ. Աթաբեկյանը: Մեզ հետ է նաև առաջնորդության ոլորտի առաջատար մասնագետներից մեկը, որը երիտասարդներին է տրամադրում իր փորձն ու գիտելիքները»:

Նշենք, որ հրավիրված դասընթացավարը միջազգային բնագավառում լիդերության բարձրակարգ մասնագետ է: Իսկ օրվա թեման՝

«Գիտակից առաջնորդություն»-ը, բաղկացած էր մի քանի կետերից: Ռուզաննա Աթաբեկյանն ու մյուս կազմակերպիչները փորձեցին պարզել, թե ինչ է ուզում այսօրվա երիտասարդը, ինչ միտումներ ունի, և ինչ տեսլական է սպասվում երկրի զարգացման համար:

Անդրադառնալով առաջնորդության հատուկ հմտություններին՝ Ռ. Աթաբեկյանը հատկանշեց այն առաքելությունը, որն ունի առաջնորդությունը աշխարհը դեպի լավը փոխելու գործում: «Եթե ուզում ես մի բան փոխել, ինքդ եղիր այն փոփոխության նախաձեռնողը, որն ուզում ես տեսնել աշխարհում: Մենք հավատում ենք, որ տեղական և միջազգային առաջնորդների, մտածողների ու կազմակերպությունների հետ միասին կարող ենք աջակցել ապագա նորարար առաջնորդների բացահայտմանն ու զարգացմանը»,- ասաց նա:

Ինտերակտիվ և անմիջական շփման ընթացքում բանախոսն անդրադարձել է կառավարման մոդելի առանձնահատկություններին: Մասնավորապես՝ գործատու-աշխատակից քաղաքակիրթ հաղորդակցության կարևորությանը, որոշակի նպատակներ սահմանելու անհրաժեշտությանը, մի շարք այլ նրբությունների:

Հիրավի, երիտասարդության համար սա

կյանքի յուրօրինակ դաս էր, որտեղ բացահայտվում են հաջողության հասնելու ուղիները:

Դասընթացների հաջորդ օրը երիտասարդ առաջնորդների միջազգային դպրոցի ներկայացուցիչներին ընդունել է ԱԳ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը:

Դասընթացների կազմակերպիչներն իրենց գոհունակությունն են հայտնել երիտասարդների շրջանում առաջնորդության հմտությունները զարգացնելուն միտված միջոցառման առթիվ, ապա գերատեսչության ղեկավարի հետ քննարկել այդ առումով հետագա համագործակցության քայլերը:

ԿԳՍ նախարարի հետ ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ Երիտասարդ առաջնորդների միջազգային դպրոցի ներկայացուցիչներն ապրիլ ամսին դարձյալ կայցելեն Արցախ և կանցկացնեն դասընթացների 2-րդ փուլը: Այնուհետև նախատեսվում է գոնե ամիսը մեկ կազմակերպել դասախոսություններ և ստանալ այն արդյունքը, ինչին ձգտում են: «Մենք կտեսնենք, թե այն երիտասարդները, որոնց հետաքրքրում է առաջնորդության թեման, ինչպես են ուզում զարգանալ, և արդյո՞ք տեսնում են իրենց հետագա զարգացումը նաև երկրից դուրս՝ այն պայմանով, որ պետք է վերադառնան Արցախ և գործեն ի շահ հարազատ երկրի»,- ասաց Ռ.Աթաբեկյանը:

«Անկեղծ ասած, շատ բարձր են գնահատում այս դասընթացները. մենք սկզբում ակնկալում էինք, որ կլինի 8-10 մասնակից, բայց երբ լսարան մտանք ու տեսանք, որ շուրջ 100 մասնակից կա, անչափ ուրախացանք: Առաջին ընդմիջումից հետո մեզ միացավ ևս 20 երիտասարդ, և բոլորը ոգևորված ունկնդրում էին: Օրվա վերջում հասկացանք, որ նրանց համար թեման այնքան հետաքրքիր է, որ նույնիսկ տուն գնալ չէին ցանկանում: Ուրեմն՝ այն նպատակը, որ դրել ենք մեր առջև, կարողացել ենք լիակատար իրականացնել»,- ասաց Միջազգային դպրոցի տնօրեն Գոհար Դումաշյանը:

Դասընթացների վերաբերյալ իր տեսակետը հայտնելով՝ նախարար Ն. Աղաբալյանը մասնավորապես ասաց. «Նախարարությունը մեծ կարևորություն է տալիս ոչ ֆորմալ կրթության ծրագրերին. դրանք օգնում են մեր երիտասարդներին՝ բացահայտելու իրենց ներուժը, նոր մտեցումներ ու կարողություններ: Երիտասարդ առաջնորդների միջազգային դպրոցի հետ սա մեր առաջին հանդիպումն է, առաջին կրթական համատեղ ծրագիրը, և հույս ունեն, որ այն շարունակական բնույթ է կրելու: Կազմակերպիչների հետ մենք պայմանավորվեցինք պարբերաբար անցկացնել նման սեմինարներ, և մեր երիտասարդներին, ուսանողներին հնարավորություն տալ մասնակցել միջազգային ծրագրերին: Սա շատ կարևոր է այն առումով, որ մեր երիտասարդներն ունեն մեծ ներուժ, սակայն չունեն հմտություններ, չունեն փորձ, քանզի գրկված են տարբեր միջազգային ձևաչափերով միջոցառումների մասնակցելու հնարավորությունից: Այս առումով երիտասարդ առաջնորդների միջազգային դպրոցի նախաձեռնությունը ողջունելի է, և մեզ համար համագործակցության նոր հնարավորություններ է բացում թե՛ Հայաստանում, և թե՛ արտերկրում: Դատելով արժագանքներից, թե ինչ ոգևորությամբ են արցախցի երիտասարդները մասնակցել այս դասընթացներին, կարելի է նաև հետևություններ անել ծրագրի արդյունավետության մասին: Կոնկրետ արդեն երիտասարդ առաջնորդների նոր համայնքներ են ձևավորվում, ինչը հնարավորություն է տալիս տարբեր ծրագրեր ավելի նպատակային և թիրախավորված իրականացնել»:

Նախարարի խոսքով՝ կազմակերպիչներին առաջարկել են միջազգային և համահայկական տարբեր ծրագրեր կյանքի կոչել Արցախում, քանզի արցախցի երիտասարդները ոչ միայն ստանալիք, այլև տալիք ունեն, և այդ շփումները երկուստեք օգտակար կլինեն:

L. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵՆՔ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆ ԼՍՐԱՐՆԵՐՈՎ



«Մշակույթի զարգացման միտումները» թեմայով օրերս Արցախի պետական համալսարանում ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակում դասախոսություն կարդաց ԳԳ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Դավիթ Մուրադյանը՝ ներկայումս փոխանցելով ազգային ինքնուրույն պահպանման և պետականաստեղծման գործում մշակույթի և նրա ամենատառաջին ու կարևոր դրսևորման՝ լեզվի դերը: Ներկայացնում ենք Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻ դասախոսություններն այդ առնչությամբ:

Վաղվա սերունդը պետք է ճանաչի իր Տունը, իսկ Տունը միայն ֆիզիկական հայրենիքը չէ, նույն ինքը մշակույթն է: Եթե մարդը չի ապրում իր մշակույթի ամբողջ բովանդակության, արժեհամակարգի իդեալների և իրողությունների մեջ, նա բացարձակապես անտուն է, անհանգրվան: 20-րդ դարի գերմանացի փիլիսոփա Մարտին Հայդեգերը մի հայտնի աֆորիզմ է մեջտեղ բերել, որը շրջանառվում է աշխարհով մեկ՝ «Լեզուն որպես կեցության տուն»:

Լեզուն ինքնին մշակույթ է, և երբ մենք հայերեն խոսում ենք նույնիսկ կենցաղում, միանգամից տեղափոխվում ենք մշակույթի դաշտ: Երբ ասում ենք՝ հաց, ջուր, ասում ենք նույն բառը, ինչ ասել է Հայկ Նահա-

պետը: Այսպես խոսելով՝ մեր իսկ լեզվով տեղափոխվում ենք մետաֆիզիկական ժամանակի մեջ, որտեղ ապրում են ժողովուրդը, բոլոր սերունդները, որովհետև լեզուն կրում է ամբողջականության սինդրոմը: Հայոց լեզվի մեջ մենք անընդհատ հայկական կենսատարածության և պատմատարածության, հոգեարածության և մշակութային տարածության մեջ ենք: Իսկ հայոց լեզուն ունի մի հատկություն ևս. այն քաղաքակրթական հիշողություններ է կրում իրենում, շրջապատող երկրների և անհետացած լեզուների մշակույթը և ըստ էության աշխարհաստեղծման վկաներից է: Հայոց լեզուն կրում է քաղաքակրթական հասկացությունների մի ամբողջ համակարգ, այդ իսկ պատճառով բա-

վականաչափ խորը, հզոր և ունիվերսալ հիմք է՝ դրա վրա մշակույթ ստեղծելու: Հակաճառողները կասեն՝ լեզվի վրա գրականություն է ստեղծվում, ուրիշ էլ ի՞նչ մշակույթ: Բեթիովենը գրում է գերմաներեն, եթե ուշադիր լսենք նրա երաժշտությունը, կտեսնենք, որ այն գերմաներեն է, ամբողջ այդ լեզվաստրուկտուրաների ինտոնացիոն համակարգից, այդ լեզվի պլաստիկայից ծնված երաժշտություն է: Վերդին գրում է իտալերեն: Ուշադիր լսելով՝ կարելի է տեսնել Վերդինի և Բեթիովենի երաժշտության տարբերությունը, և եթե Վերդինի նոտաները վերածենք բառերի, կստացվի իտալերեն: Հայոց մանրանկարչությունը հայերեն է, մեր մանրանկարչությունը հայոց լեզվով է նկարված: Դյուրերի գեղանկարչությունը գերմաներեն է, Գոյայի գեղանկարչությունը իսպաներեն է: Այսպիսով, լեզուն դառնում է ընդհանրապես մշակույթ սնող համակարգ: Ազգային ինքնությունը և ազգային մշակույթի ինքնությունը իր մայրենի լեզվից է: Այդ պատճառով է Մարտին Հայդեգերն ասում, որ լեզուն տունն է կեցության: Այդ պատճառով է Ավ. Իսահակյանն ասում՝ լեզուն հայրենիք է: Դրանք փոխկապակցվող մտքեր են, որ գալիս են դեպի մեկ միասնական ճշմարտություն: Դա այն է, որ երբ խոսում ենք մշակույթի մասին՝ որպես տուն կեցության, անշուշտ, դա

պետք է սկսենք մայրենի լեզվից: Եվ վերջապես լեզուն սուվերենություն է, լեզուն պետականաստեղծ համակարգ է, քանի որ ազգային պետություն ստեղծում են նույն լեզվով միմյանց հետ խոսող մարդիկ: Լեզուն ինքն արատակցիա է. նյութեղեն չէ, անշուշտից է, ֆիզիկական իրականության մեջ չկա, միայն կա մտավոր, հոգևոր իրականության մեջ: Լեզուն ահավասիկ այսպիսի մի զարմանալի այլափոխությամբ վերացականից վերածվում է իրականի, որովհետև ինքը ազգաստեղծ և պետականաստեղծ երևույթ է:

«Ֆաուստ»-ի հեղինակ գերմանացի Գյոթեն ասում է, որ եթե ուզում եք ազգ ձևավորել, ստեղծեք թատրոն: Ըստ էության, հելլենները՝ որպես մեկ միասնական ազգ, որ հետո դարձան միասնական պետություն, ձևավորվեցին իրենց թատրոնի շուրջ: Մինչև այդ նրանք քաղաքպետություններ էին՝ նույն լեզվի շուրջ նույն գեներտիկական բովանդակությամբ ժողովուրդ, բայց՝ մշտապես պատերազմների մեջ միմյանց դեմ. շահերի տարբերություն կար:

Մուշեղ ԻՇԽԱՆ ՀԱՅ ԼԵԶՈՒՆ ՏՈՒՆ Ե ՀԱՅՈՒՆ

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն, Ուր կը մտնեն ամեն հայ իբրև տանտեր հարազատ, Կստանա սեր ու սնունդ, սրտի հպարտ ցնծություն, Եվ բորյանեն ու բուրբեն հոն կը մնա միշտ ազատ:

Քանի՞ դարեր և քանի՞ ճարտարապետ հանճարներ Սշխատեցան անոր տալ վեհություն, գեղ ու պերճանք, Քանի՞ գեղջուկ բանվորներ տրեքեցան տիվ ու գիշեր, Որոնք թաղված են հիմա մոռացության մութի տակ:

Մշտանորոգ ու միշտ հին՝ ան կը տես դարե դար, Իր ծրագրերը՝ միշտ լույս, իր օջախին հուրը՝ վառ, Բարիքներով անսպառ լեցուն ամբարն ու մառան:

Հոն է միայն, որ կրնա գտնել ամեն հայ կրկին հաճամուժի մեջ օտար կորսնցուցած իր հոգին, Անցյալն անհուն և ներկան, նույնիսկ մթին ապագան...

31 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Իմ օրագրից

1989թ. ԱՊՐԻԼ

Հատուկ կառավարման կոմիտեն շարունակում էր իր աշխատանքը, սակայն այդպես էլ կուսակցության մարզկոմը չվերականգնվեց: Մենք սերտ կապ ունեինք Ստեփանակերտի քաղկոմի հետ, որի առաջին քարտուղարն է մարզկոմի նախկին քարտուղար Վալերի Աթաջանյանը: Գործում են նաև կուսաշրջանները: Ժողովուրդը հիմնականում գոհ է շրջկոմների աշխատանքի ոճից, մասնավորապես Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանի գործունեությունից: Արցախահայությունը մեծ ակտիվությամբ մասնակցեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մարտի 21-ին տեղի ունեցած ընտրություններին: Ես անչափ գոհ եմ, որ թիվ 726 ընտրական օկրուգում Յենրիխ Անդրեյի Պողոսյանը, որի վստահված անձն էի, ստացել է ընտրողների բացարձակ մեծամասնության քվե: Նրա հետ միասին ժողովրդական պատգամավորներ են ընտրվել Ջորի Բալայանը, Արկադի Վոլսկին, Վահան Գաբրիելյանը, Վաչագան Գրիգորյանը, Բորիս Դադանյանը և Վ.Ջաֆարովը: Ապրիլի սկզբից խոսակցություն է գնում, որ մարզի ադրբեջանաբնակ գյուղերում մեծ թափով շինարարական աշխատանքներ են գնում, արագ կերպով ճանապարհներ են բացում՝ Շուշի-Կրկժան, Զյուսալար, Ջամիլու, Խոջալու ուղղությամբ՝ շրջանցելով Ստեփանակերտ-Ասկերան մայրուղին: Բաքվի լրատվամիջոցները հեղեղված են հակահայկական քարոզչությամբ: Վեգիորովը ժողովրդի առաջ բարբաջում է՝ ասելով. «...кто такой Зори Балаян.» կամ ի՞նչ դարաբաղյան հարց, այդ հարցը վերջնականապես լուծված է: Նա հատուկ ընդգծված նշում է, որ Արկադի Վոլսկին Ադրկոմկուսի Կենտկոմի բյուրոյին հաշվետվություն է տվել և այլն, և այլն: Այս բոլորն ավելի են շիկացնում մթնոլորտը: Չնայած այս վիճակին, մարզիկ գատկական պատրաստություն են տեսնում, գոհունակությամբ են ընդունում այն լուրը, որ այն մեծ շուքով կնշվի Գանձասարում, որին ես էլ եմ հրավիրված, սակայն առողջությունս չի ներում, և ապրիլի 5-ին մեկնեցի Սոչի բուժման: Բաքվում Նարինանովի հարապարակի վրա գտնվում էր միջնակ եղբորս՝ Կառլենի բնակարանը: Երբ դուռը բացեցի, եղբայրս գարմանքից ապշել էր, թե ինչպես եմ համարձակվել այդ օրերին Բաքու ժամանել, երբ քաղաքի ոչ մի հայ չի համարձակվում փողոց դուրս գալ: Չնայած դրան, խեղճ եղբայրս ինձ ուղեկցեց մինչև օդանավակայան. ինչ իմանալի, որ մի քանի ամսից

հետո նա մազապուրծ հասնելու է Ղարաբաղ և իր մահկանացուն կնքելու այստեղ: Ինքնաթիռում կողքիս նստեց ավագ դատերս հասակակից մի ադրբեջանուհի: Քիչ անց ծանոթացանք, Ջարիֆա էր անունը: Իմացա, որ ինքն էլ ինձ հետ նույն սանատորիայում է բուժվելու և 20 օր օրական երեք անգամ նույն ճաշի սեղանի շուրջն էինք նստում: Ես նրան դիմում էի անունով, իսկ ինքը՝ մուսուլմանով: Սանատորիայում աղջիկը ոչինչ չէր հարցնում: Մարդիկ սարսափով են խոսում Ղարաբաղի մասին, կարծում էին, թե այնտեղ իրար կտոտրում են, որ անկարգ ու անօրինական, օրինախախտ մարդիկ ենք և այլն: Ինձ համար զարմանալի էր, որ մեր Շարժման մասին գաղափար չունեն, և ես ամեն օր պատմում էի նրանց. փաստորեն պրոպագանդիստական աշխատանքս շարունակում էի... Իսկապես որ մեր Շարժման մասին չափազանց աղոտ տեղեկություններ ունեին: Բայց երբ այդ օրերին կենտրոնական հեռուստատեսությամբ ցուցադրվեց հայտնի հրապարակախոս Յենրիխ Բորովիկի հեղինակած «Позиция» ծրագրով արձակած «Нагорный Карабах размышления вслух» հաղորդումը, որի մեջ առաջին անգամ Խորհրդային Միությունով մեկ (և ոչ միայն) առանց խեղաթյուրելու ներկայացվեցին մեր ժողովրդի խնդիրները, մարդիկ հասկացան, որ իրենք սխալ պատկերացում ունեն դարաբաղցիները մասին: Տեսնում և հրճվում էի, թե ինչ լարված հետաքրքրությամբ էին դիտում ու տաք-տաք զրույցի ու վեճի բռնվում: Ես բացատրում էի, որ դա ճշմարտության 10%-ի չափ է, բայց և այնպես, ուրախ եմ, որ «Позиция»-ն փակագծերը բացեց: Տուն վերադառնալու ժամանակս եկավ, և որոշեցի վերադարձի տոնս պատվիրել: Ջարիֆան դեռ երեք օր ուներ, բայց խնդրեց, որ իր համար էլ տոնս վերցնեմ, և մենք միասին Բաքու վերադարձանք: Երբ իջանք ինքնաթիռից, այդ աղջիկն առանց ցտեսություն ասելու արագ հեռացավ ու ամբոխի մեջ կորավ: Ես գնացի եղբորս մոտ, միասին գնացինք ԳՈՒՄ՝ կոստյում գնելու: Այդ բաժնի աշխատողը հայուհի էր. իմանալով, որ հայ եմ, ինձ համար մի ընտիր կոստյում բերեց 208 ռուբլիանոց և ցածր ձայնով շնորհավորեց: Ստեփանակերտում իմացա, որ մայրս շատ ակտիվություն է ցուցաբերել Շարժման մեջ, մասնակցել է հանրահավաքներին, ծանոթացել ակտիվիստների հետ և «Կռունկ»-ի անդամ Ռոբերտ Բաղդասարյանին

փող է տվել, որն իր տղայի՝ Կիլենի հետ գնացել է Մեհտիշեն, մատաղացու մի լավ գառ գնել և բերել: Մայրս 1989թ. հունվարի 6-ին 89 տարեկան էր, հունվարի 6-ը ինքն էր ընտրել, քանի որ հավատացյալ էր. և 90-րդ գարունն ապրող այդ կինը երագուն տեսել է, որ Հիսուս Քրիստոսը երկնքից իջնում է Հաղթանակի հրապարակ և ժողովրդին ասում, որ հաղթանակը դարաբաղցիներին է, ու ահա իր տուն է հավաքել հարևաններին, որոնց մեջ պաշտոնյաներ, մատաղ արեւ, որպեսզի Ղարաբաղի հարցը լուծվի: Իմանալով այդ մասին, խնդրում եմ մորս, որ մեծ կին է, այլևս հանրահավաքներին չմասնակցի, բայց ինձ չի լսում, մի օր ընկերներս հետ դպրոցից (հ. 9) իջնում ենք Հաղթանակի հրապարակ, և ամբիոնում երևում է մայրս, ձեռքերը դեպի երկինք պարզած իր խոսքն է ասում Աստծուն և ժողովրդին: Շատ եմ վրդովվում ու ջղայնանում, գնում՝ թևից բռնում բերում եմ տուն: Ջերմիկսի փողոցի վրա էր բնակվում, հորդորում եմ, որ անհարմար է, այդպիսի բան այլևս չանի, այդ ժամանակ ներս եմ մտնում Սերժ Առուշանյանը, որը հետագայում մեր Պաշտպանության բանակի հրամանատարի տեղակալն էր, հիմա չգիտեմ որտեղ է, և երջանակահիշատակ Գուրգեն Գաբրիելյանը ու զարմացած ինձ հարցնում են. «Ընկ. Շահնազարյան, էդ քու մամատ ա՞», եկել ենք, որ վաղն էլ գա ելույթ ունենա»: Ես քահ-քահ ծիծաղում եմ ու ասում եմ. «Ես բախտավոր մարդ եմ, մայրս էլ է հեղափոխական»: Այսբանն՝ ի միջիայլոց: Մայրս մահացել է 1998-ին: 24.04.1989թ.: Նշվեց Եղեռնի օրը, չգիտեմ ինչու, այսպես կարծ եմ գրել, ոչ մի բան չեմ հիշում: 1990թ. ապրիլի 24-ը լավ եմ հիշում, որը կապված էր մի շարք ձերբակալությունների հետ: Բաքվի հակահայկական քարոզչության հետևանքով որոշված էր ապրիլի 25-ին հերթական գործադուլ սկսել, բայց տնօրենների խորհրդի և քաղկոմի զգալի աշխատանքի արդյունքում գործադուլը հետաձգվեց: Միաժամանակ պահանջ ներկայացվեց, որ մինչև մայիսի 15-ը Ղարաբաղի հարցը լուծվի: Ինձ համար պարզ չէ, ինչն է հիմք ընդունվել, որ մայիսի 15-ը հարցի լուծման ժամկետ է համարվում, գուցե ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ժողովրդական դեպուտատների առաջին համագումարն է նկատի առնվում, որը հրավիրվելու է մայիսին: Սպասում եմ:

Մառլեն ՆԱՂԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստակավոր աշխատող

ИМЕТЬ ДРУГА - ВЕЛИКОЕ БЛАГО



Между русским и армянским народами сложились прекрасные отношения, уходящие своими корнями в глубь истории. Мы, арцахцы, благодарим Бога за то, что у нас много друзей, которым небезразлична судьба миролюбивого народа Карабаха. Одним из самых верных наших друзей является Коноплев Виктор Валерьевич - поэт из Нижнего Новгорода, дипломант Национальной

литературной премии "Золотое перо Руси" (2006 г.), дипломант конкурса критики Национальной литературной сети (2004 г.), автор русского перевода государственного Гимна Республики Арцах. Он знает, какой ценой далась народу Арцаха свобода и независимость. Именно ему принадлежат строки: "Храни, Господь, Арцах с его народом".

После Апрельской войны 2016 года он приехал в Карабах и снял фильм о наших восемнадцатилетних парнях, которые вступили в неравный бой с противником и победили.

Виктор Коноплев является инициатором конкурса на лучшее сочинение-исследование "Арцах, я люблю тебя!", а также редактором сборника сочинений финалистов конкурса (2015г.).

Он постоянно отмечает, что в душе каждого нового поколения Арцаха живет любовь к Родине, без чего невозможно становление полноценной личности.

Ежегодно в Арцахе проходят Дни русского слова, где всегда в числе почетных гостей бывает Виктор Коноплев. Любовь Коноплева к Армении и его преданность нашей стране - пример верности традициям тысячелетнего братства и духовного родства двух народов. Сегодня он прилагает максимальные усилия для их развития и укрепления.

Буквально недавно кто-то (нам всем понятно кто) распространил информацию, что якобы Виктор Коноплев извинился перед азербайджанцами. Виктор Валерьевич на своем сайте опроверг эту информацию, написав, что это фейк, такого не было и в принципе не может быть. Он отметил: "Моя позиция не изменилась: Арцах - армянская земля. И я, как ездил туда, так и буду ездить, как говорил правду, так и буду говорить, несмотря на все угрозы и попытки очернить меня".

У Кима Бакши есть прекрасные слова: "Человек, который любит другой народ, спасает честь своего народа и своей страны".

22 марта Виктору Валерьевичу Коноплеву исполнилось 50 лет! Дорогой друг! С юбилеем!

Желаем Вам творческих успехов, крепкого здоровья, счастья. Пусть в Вашем сердце всегда царит весна! Да хранит Вас Бог!

Почет и уважение талантливому поэту!

Виктор Коноплев передал подарок арцахцам в преддверии своего юбилея.

По рекам небесным, по горным дорогам
Влюбленное сердце несу я без страха
К воспетым в стихах фаворитам у Бога,
Моим современникам - людям Арцаха.
И в жизни моей и в моем послесмертье
Душа моя с вами, и вы, это зная,
Меня посвящаете в тайны бессмертья
Особого бренда арцахского чая.
В нем радость и боль, словно горные воды, -
В жару освежают, но камни их остры.
В нем правда времен и желанье свободы,
Но главные вы, мои братья и сестры.

ОСИПОВ Рубен
Государственный инспектор
Министерства образования, науки и спорта РА

ՆՁՊ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՈԱԶՄԱՐՎԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՂԱՍԱՎԱՆԳՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԱՆՋՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ

Հողվածում ներկայացվում է ղարաբաղյան հակամարտության և Հայ ռազմարվեստի պատմության դասավանդման կարևորությունը մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության, հիմնախնդրի իրական կերպարի հանրայնացման, պատերազմի և խաղաղության պայմաններում գտնվող մեր Հայրենիքի անվտանգության ապահովման գործընթացում:

Հայ ռազմարվեստի պատմությունը առարկան հանրակրթական դպրոցներում դասավանդելը կարևոր նշանակություն ունի կրթության երկու ենթահամակարգերի՝ ուսուցման և դաստիարակության, հետևաբար և՛ մեր պետության առջև ծառայած անվտանգային խնդիրների լուծման տեսանկյունից: Նախ՝ ինչպես յուրաքանչյուր առարկայի դեպքում, դա անհրաժեշտ է որոշակի գիտելիքներ ձեռք բերելու, տվյալ դեպքում՝ սեփական ռազմարվեստի պատմությանը ծանոթանալու համար, որն ինքնին կարևոր նշանակություն ունի: Մյուս կողմից, որը մեր պարագայում ավելի կարևոր է, ի տարբերություն մյուս առարկաների, որոնց հիմնական նպատակը աշակերտներին զուտ գիտելիքներ հաղորդելն է, տվյալ բնագավառը կարևորվում է նաև մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության համար: Իսկ ինչու է կայանում այդ կարևորությունը: Պատերազմի և խաղաղության պայմաններում ապրող յուրաքանչյուր երկրի, այդ թվում և հատկապես մեզ համար երկրի պաշտպանունակության և անվտանգության հիմնական բաղադրիչներից մեկն էլ կապված է ռազմահայրենասիրական դաստիարակություն ունեցող, բարոյականային բարձր որակներով օժտված հասարակություն ունենալու հետ: Բնականաբար, որքան բարձր է նման որակական հատկանիշներով օժտված քաղաքացիների առկայությունը, նույնքան բարձր է երկրի պաշտպանունակության տոկոսային հարաբերակցությունը: Եվ հակառակը՝ քանի որ զուտ մեխանիզմի առումով Հայաստանը չունի այլընտրանք, քան անվտանգության կորիզ ստեղծել իր ամբողջ բնակչությանը:

ՈԱԶՄԱՐՎՅՈՒՄԻ ԱՍԻՐԱԿԱՆ ՂԱՍՏԻԱՐԱՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Հայ ռազմարվեստի պատմության դասավանդումն ունի իր առանձնահատկությունները, որոնց անդրադառնալիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երկու հանգամանքի վրա: Դրանցից մեկը կապված է արդեն վերը նշված նպատակի՝ ռազմահայրենասիրական դաստիարակության, մյուսը՝ գործընթացի կազմակերպման, այն է՝ թեմայի արդյունավետ մատուցման հետ: Այսինքն՝ գլխավոր նպատակը մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունն է, որի իրականացման համար պետք է օգտագործել որոշակի մեթոդներ ու միջոցներ: Փորձենք մանրամասնել ըստ հերթականության:

Այսպես, ռազմահայրենասիրական դաստիարակությունը մեր կարծիքով իր մեջ ներառում է առնվազն հետևյալ բաղադրիչները:

Ռազմական բաղադրիչ: Արցախի Հանրապետության ստեղծման օրվանից երկրի անվտանգության ապահովման գործընթացում գերակա դիրք ունեն և այժմ էլ ունի ռազմական բաղադրիչը, որի հիմքերը դրվում են դպրոցում, իսկ ավելի խորացված ու մասնագիտորեն՝ բանակում: Հետևաբար կարող ենք ասել, որ այս հար-

ցում բավականին մեծ է զինղեկների դերը, քանի որ հենց նրանք են հանդիսանում այն հիմնական օղակը, ովքեր պետք է մատաղ սերնդին նախապատրաստեն զինվորական ծառայության, ձևավորեն զինծառայության մասին որոշակի տեսական ու գործնական գիտելիքներ, հայրենասիրության ոգով դաստիարակված, համապատասխան ունակություններով օժտված և ամենակարևորը՝ թշնամուց հաղթելու վճռական դիրքորոշում ունեցող ապագա հայրենայաց պաշտպաններ:

Բարոյականային (բարոյահոգեբանական) բաղադրիչ, որը մարդկանց մեջ ձևավորում է որակական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են դժվարություններին դիմագրավելու, պայքարելու, ծանր պահերին զուլիսը չկորցնելու, սառը դատելու ունակությունը և այլ կամային հատկություններ: Նման ունակությունների ձեռքբերման համար կարևորվում է նաև ֆիզիկական դաստիարակությունը, որը նպատակ ունի ոչ միայն կոփել երիտասարդների մարմինը, այլև ոգին: Եվ հենց այդ միասնության մեջ է, որ անհատը դառնում է անպարտելի:

Այս գործընթացում իր ուրույն տեղն ու դերն ունի **կրթական բաղադրիչը**, որը երկրի անվտանգության ապահովման մյուս բաղադրիչների հետ միասին մեկ ամբողջություն է կազմում՝ ցույց տալով հասարակության առջև ծառայած մարտահրավերներին դիմակայելու նրա ունակությունը: Այսինքն՝ մարդկանց կրթական մակարդակի բարձրացումը հնարավորություն է ընձեռում ավելի արդյունավետ կազմակերպել հասարակության կառավարումը՝ այդ գործընթացին ներգրավելով իրապես մրցունակ ուժերին և ստեղծել արժեքներ, որոնք անհրաժեշտ են նրա շարունակական զարգացումն ապահովելու համար: Այլ կերպ ասած՝ կրթված ու գիտակից քաղաքացին ավելի շատ կարող է օգտակար լինել սեփական հանրությանը և հենց ինքն իրեն, դրանով իսկ երկրին ու նրա պաշտպանությանը, քան անկիրթ ու պարփակված անձնավորությունը:

Քարոզչական բաղադրիչ, որն իր հերթին կարելի է բաժանել երկու ենթախմբի: Առաջինը կապված է այն ընդհանրական գործընթացների հետ, որոնք առավելապես առնչվում են զլրբալիզացիա հասկացությանը: Մենք գիտենք, որ երևույթի տարածման արդյունքում փոխվում է մարդկանց մտածելակերպը, քայքայվում հասարակության արժեհամակարգը, ձևավորվում են այնպիսի քաղաքացիներ, որոնց համար ազգային մշակույթն ու մտածելակերպը, վարքի ավանդական դրսևորումները և ազգին բնորոշող այլ արժեքներ, մեղմ ասած, դառնում են օտար: Եվ այստեղ պետք է ասել, որ հիմնական անելիքն ընկած է ռազմահայրենասիրական դաստիարակությունն ապահովող անձանց վրա, որոնց կարևոր օղակը նաև զինղեկներն են, որոնք մատաղ սերնդի մոտ պետք է ձևավորեն մեր ազգին բնորոշ, մեր գոյությանը չսպառնացող և նրա անվտանգությունն ապահովող արժեքներ: Աշխարհի որոշ երկրներ հաջողությամբ կարողանում են օգտագործել զլրբալիզացիայի ընձեռած հնարավորությունները սեփական արժեհամակարգը հարստացնելու և ժամանակի մարտահրավերներին դիմակայելու համար: Օրինակ՝ ճապոնիայում առաջ է քաշվել մի հայեցակարգ, որը բառացի նշանակում էր՝ «որևէ բան անել տեղաբնիկի պես», որի նշանաբանն էր՝ «Մտածիր զլրբալ, գործիր լուրջ»: Նշված հայեցակետը, որը մասնագետների կողմից ստացել

է զլրկալիզացիա անվանումը, միտված է զլրբալիզացիան օգտագործել սեփական ազգայինը պահպանելու և զարգացնելու համար:

Քարոզչական բաղադրիչի մյուս կողմն ուղղակիորեն կապված է մեր ֆիզիկական գոյությանն սպառնացող՝ հակառակորդի քարոզչական գործունեության հետ: Այստեղ հարկ է անդրադառնալ ոլորտում նրա ցուցաբերած որոշ դրսևորումների: Առաջինը կապված է լրատվամիջոցներում, հանրային լայն շրջանակներում և նույնիսկ դպրոցական ու բուհական դասագրքերում հակահայկական քարոզչության իրականացման հետ, որոնց հիմնական նպատակը հայերի նկատմամբ ատելությանը լցված սերունդ դաստիարակելն է, ովքեր ցանկացած պահի պետք է պատրաստ լինեն ոչնչացնելու հայերին, որոնց սպանությունը համարվում է հերոսական արարք: Մենք երբեմն անսալով մեր ճշմարտացիությանը՝ թերագնահատում ենք հակառակորդին, սակայն պետք է ասել, որ նա այս ոլորտում բավականին հաջող է գործում: Մեկ օրինակ: Տրամաբանությունը ենթադրում է, որ 1991-1994թթ. ռազմական գործողությունների արդյունքում պարտված կողմը հենց այս պատճառով չպետք է ունենար հերոսի կամ նման այլ կոչումներով քաղաքացիներ: Մինչդեռ պարզվում է, որ դրան հակառակ՝ Ադրբեյջանի Հանրապետությունում ևս կան նման բարձրագույն կոչումների արժանացած քաղաքացիներ, և այստեղ նույնպես հորինվում են «ադրբեյջանական» ռազմական արվեստին նվիրված հերոսական դրվագներ: Ոչնչից նման կերպարներ ստեղծելով՝ նրանք փորձում են բարձրացնել երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական ոգին, նրանց մեջ սերմանել հավանական պատերազմին նախապատրաստվելու, հայրենիքին նվիրվելու ունակություններ:

Մեր կարծիքով՝ ռազմահայրենասիրական դաստիարակության նշված չորս բաղադրիչները՝ կրթական, ռազմական, բարոյականային և քարոզչական, միասին կազմում են մեկ ամբողջություն, որը մյուս բաղադրիչների հետ մեկտեղ հանդիսանում է պետության անվտանգային բաղադրիչի ձևավորման ընդհանուր շղթայի կարևորագույն բաղադրիչը:

ՀԱՅ ՈԱԶՄԱՐՎԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՂԱՍԱՎԱՆԳՈՒՄԻ ԱՌԱՆՋՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԸ

Այժմ անդրադառնանք գործընթացի կազմակերպման, այսինքն՝ առարկայի արդյունավետ մատուցմանը, որն անմիջականորեն կապված է առաջադրված նպատակին հասնելու ուղիների ու մեթոդների հետ: Այստեղ անհրաժեշտ ենք համարում առանձնացնել հետևյալը.

1. Մանկավարժը՝ որպես տվյալ առարկայի խորագիտակ: Մենք բուրբ գիտենք, որ մանկավարժների մասնագիտական պատրաստվածության և հմտությունների մակարդակով է պայմանավորված աճող սերնդի ոչ միայն կրթվածության մակարդակը, այլև արժեհամակարգը: Նույնիսկ առօրյա խոսակցության ընթացքում, երբ ինչ-որ մեկը որևէ բնագավառում ցուցաբերում է չիմացություն, մենք նրան հարցնում ենք, թե ով է եղել նրա ուսուցիչը, բնականաբար, դրանով իսկ տվյալ մարդու ցածր գիտելիքներ ունենալու մեջ անուղղակիորեն մեղադրելով նրա դաստիարակին: Եվ հակառակը. Արիստոտելի մասն ուսուցիչ ունեցողը չէր կարող անպիտան լինել: Ուսուցման արդյունավետությունը կախված է նրանից, թե որքա-

նով է ուսուցիչը խորագիտակ այդ գործընթացի պլանավորման, կազմակերպման, գիտելիքների փոխանցման և աշակերտների վրա ազդելու հարցերում: Մանկավարժական գործունեությունը նրանից պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների անընդհատ կատարելագործում: Այդ խնդրի լուծմանն են ուղղված հատկապես ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացներն ու ինքնուսուցումը:

Մանկավարժի խնդիրն է յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի նպաստավոր միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ ու հնարքներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի դրսևորել նախաձեռնողականություն և ստեղծագործական միտք: Ժամանակակից մանկավարժական հնարքները՝ համագործակցային ուսուցումը, նախազգային մեթոդը, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը, հնարավորություն են ընձեռում իրականացնել աշակերտակենտրոն մոտեցում: Կարծում ենք, մանկավարժներից յուրաքանչյուրը, փորձից ելնելով, ունի նաև դասավանդման իր ուրույն՝ որոշակի մոտեցումների նկատմամբ գերակայություն, քանի որ այն անձինք, որոնց ուղղված են այդ գործողությունները, միատեսակ չեն: Որանցից յուրաքանչյուրն ունի սեփական մտածելակերպ և այս կամ այն իրադարձության վերաբերյալ սեփական բացատրություն: Պարզապես ուսուցանվողների հետ հարաբերվելիս կարևոր է գիտակցել, որ անհրաժեշտ է կապ հաստատել յուրաքանչյուր անհատի հետ, նույնիսկ խմբի հետ գրուցելիս: Ամերիկացի հայտնի գեներալ Նորման Շվարցկոպֆը գրել է. «Ես տեսել եմ շատ մարդկանց, ովքեր կանգնելով դասակի առջև, տեսել են դասակ: Սակայն մեծ առաջնորդները, կանգնելով դասակի առջև, ընկալում են այն որպես 44 առանձին անհատականություն, որոնցից ամեն մեկն ունի իր սեփական նպատակները, ամեն մեկն ուզում է ապրել ու բարի գործեր կատարել»: Այսինքն՝ կանգնելով ուսուցանվող կուլեկտիվի առաջ, մենք պետք է կարողանանք տեսնել 10, 15 կամ տարբեր քանակակազմի անհատներից կազմված խումբ:

2. Ուսուցիչը որպես անվիճելի հեղինակություն: Երկրորդ կարևոր առանձնահատկությունը, կարծում ենք, կապված է ուսուցչի անձի ըմբռնման՝ հեղինակության հետ: Այսինքն՝ դաստիարակության գործընթացում կարևոր նշանակություն ունեն աշակերտ-ուսուցիչ հարաբերություններում ձևավորված փոխվստահությունն ու հարգանքը: Որպեսզի ասվածն ավելի պատկերավոր լինի, ներկայացնենք հետևյալը: Շատերը թյուրիմացաբար կարծում են, որ եթե լավ գաղափար առաջարկեն, ապա մարդիկ անպայմանորեն կհետևեն իրենց: Այնինչ իրականում առաջնորդությունը գործում է այլ մեխանիզմով: Մարդիկ առաջին հերթին հետևում են ոչ թե արժանի ու ոգևորիչ գաղափարներին, այլ մարդկանց: Նրանք հետևում են արժանի առաջնորդներին, որոնք և քարոզում են ուշադրության արժանի գաղափարներ: Գուցե մի խելացի մարդ ունի շատ լավ ծրագրեր ու գաղափարներ, բայց պետք է լինի նաև առաջնորդ, որն այդ գաղափարները կյանքի կկոչի: Եթե Գարեգին Տեր-Հարությունյանը հայրենասիրական իր մտքերը հանձնեթողին, ապա գուցե դա կարողային, մի քիչ էլ ոգևորվեին, սակայն միայն նրա իրական առաջնորդ լինելու դեպքում, իր գաղափարախոսությամբ շարժվելով և հաղթանակների հասնելով՝ Գարեգին Տեր-

ԵՁՊ

Հարուստընյանը դարձավ Նժդեհ:

Երբ Ավրոն նշանակվեց Մարտունու պաշտպանական շրջանի ղեկավար, միանգամից ժողովուրդը նրան չընդունեց: Բայց շնորհիվ իր գիտելիքների, մարդկանց հետ շփվելու ունակության, իր ազնվությամբ և այլ մարդկային որակներով դարձավ բոլորի կողմից հարգված ու վստահելի հրամանատար, որը ոչ միայն իր ուրույն ազդեցությունն է թողել Արցախյան ազգային-ազատագրական պայքարում, այլև նշանակալից հետք է թողել մարդկանց մասնագիտական ու որակական հատկանիշների ձևավորման վրա:

3. Առարկայի ներկայացման կարևորությունը: Առարկայի դասավանդման երրորդ կարևոր առանձնահատկությունը կապված է ուսուցչի կողմից դասի ներկայացման ձևի հետ: Ուսուցչի կողմից նյութը պետք է մատուցվի գրավիչ և մատչելի: Դա մեծացնում է աշակերտի հետաքրքրությունը, ուժեղացնում սովորելու մոտիվացիան: Մասնավորապես պատմական նյութի ընկալման և իմացության հիմքում անհրաժեշտ է դնել ոչ միայն վերբալ ու պատկերավոր մտածողությունը, այլ նաև հուզական ապրումները, որոնք կարող են մեծապես նպաստել աշակերտների անձնական վերաբերմունքի ձևավորմանը: Հայտնի է, որ մարդու հուզական աշխարհը կարևոր դեր է խաղում նրա կյանքում: Ուստի հուզական պահը՝ որպես հոգեբանական յուրահատուկ երևույթ, պետք է լայնորեն հաշվի առնել հայ ռազմարվեստի պատմության դասերին: Ըստ Գ. Նժդեհի, որը դպրոցը ներկայացնում է և՛ որպես կրթարան, և՛ որպես տաճար, մատուցվող գիտելիքները պետք է լինեն «մեր պատմության բովանդակ գեղեցկությունն ու վեհությունը», և «չպետք է լինեն մութ և շփոթ տեղեկություններ... ցամաք և անհոգի... այնպես, կարծես նկարագրվում է Սահարայի անապատը կամ հեռավոր կղզի»: Այնուհետև զարգացնում է իր միտքը դասավանդման մեթոդների շուրջ. «Անսահման երկյուղածությամբ և անսահման քաղցրությամբ պիտի դասավանդվի հայրենագիտությունը», ապա «սրտի և մտքի կրակով պիտի խոսվի, այնպես, որ հրահրվի վերջինի պաշտամունքը մանկական հոգիների մեջ»:

4. Դասավանդման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունը: Դասավանդման գործընթացում չափազանց կարևոր է տարիքային առանձնահատկությունը հաշվի առնելը: Մենք բոլոր դեպքերում պետք է հաշվի առնենք, որ գործ ունենք դեռահասության տարիքի մարդկանց հետ, որն, ինչպես հայտնի է, անձի ձևավորման ամենավճռական շրջաններից է: Այս տարիքում են հիմնականում սկսում առաջին անգամ ի հայտ գալ անձի բնավորության դրական ու բացասական դրսևորումները: Երեխաները հաճախ դառնում են անկառավարելի, սրվում են հարաբերությունները ծնողների և ուսուցիչների հետ:

Դեռահասները գնահատում են գիտակ ու խիստ, բայց արդարամիտ, նրբանկատությամբ օժտված ուսուցիչներին, որոնք ազատ տիրապետում են առարկային, ունեն ընդարձակ գիտելիքներ, ձգտում են դասագրքի սահմաններից դուրս գիտելիքներ հաղորդել:

Քննարկվող տարիքի կարևոր առանձնահատկությունը ակտիվ, ինքնուրույն, ստեղծագործական մտածողության ձևավորումն է: Դեռահասը չի վստահում միայն ուսուցչի կամ դասագրքի հեղինակությանը, նա ձգտում է ունենալ սեփական կարծիք, իր հայացքներն ու դատողությունները, քննադատաբար է մոտենում նյութին, որը նախկինում նրա մեջ չի հարուցել ո՛չ մտորում, ո՛չ կասկած, «սխալներ» է գտնում դասագրքում կամ

ուսուցչի դատողություններում, ուզում է համոզվել այս կամ այն մտքի, դրույթի, դատողության ճշտության մեջ: Ինքնին դա մտածողության արժեքավոր հատկանիշ է, և այն ամեն կերպ պետք է զարգացնել:

5. Կիրառական նշանակությունը: Ձինդեկներն ունեն ևս մեկ առավելություն: Ի տարբերություն մյուս մասնագիտությունների, որոնք առավելապես տեսական գիտելիքներ են մատուցում, նրանց աշխատանքը նաև կիրառական նշանակություն ունի բոլոր երիտասարդների համար, քանի որ նպատակ ունի ապահովել գիտելիքի գործնական կիրառելիությունը ռեալ կյանքում ծագող տիպային խնդիրների լուծման համար: Բանն այն է, որ բոլորն էլ պետք է ծառայեն բանակում, բոլորն էլ ստիպված են լինելու ինչ-որ ժամանակ կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքում: Հետևաբար, իզուր չեն դպրոցական տարիներին այս ոլորտում ձեռք բերվելիք տեսական ու գործնական գիտելիքները: Իսկ այս կամ այն գործնական աշխատանքում, որն իրականացվում է տարբեր միջոցառումների, բանակ-հասարակություն կապի ամրապնդման շրջանակներում, վաղվա զինվորը հնարավորություն է ստանում անմիջականորեն ծանոթանալ այն պայմաններին, որոնցում նա կարճ ժամանակ հետո անց է կացնելու երկու տարվա իր ծառայությունը:

6. Հայ ռազմարվեստի պատմությունը որպես սեփական պատմություն: Առարկայի դասավանդման հաջորդ կարևոր առանձնահատկությունը մեր կարծիքով կապված է բուն առարկայի անվան հետ: Հայ ռազմարվեստի պատմության հիշարժան դրվագներին անդրադառնալիս անհրաժեշտ է կարևորել երկու հանգամանք: Առաջին՝ իրոք ռազմարվեստի պատմության հիշարժան դրվագներ են Ավարայրից, Սարդարապատից մինչև Շուշի, որոնցում դրսևորվել են հայ ժողովրդի՝ հանուն հայրենիքի մինչև վերջ պայքարելու կամքն ու վճռականությունը, հայ զինվորի խիզախությունն ու նվիրվածությունը: 1918թ. մայիսյան հերոսամարտերի ժամանակ նույնիսկ հակառակորդ կողմի զորահրամանատարը՝ Վեհիբ փաշան է հրապարակավ ընդունել հայերի լավագույն զինվորներ լինելու համոզմանը: Հայ զինվորներն աչքի էին ընկնում ամենուր, օրինակ՝ մ. թ. ա. 331թ. Գավգամելայի ճակատամարտում Հայոց այրուծին փախուստի մատնեց Ալեքսանդր Մակեդոնացու ձախ թևը՝ Պարսեմեհիոնի զորքը և հայտնվեց Մակեդոնացու թիկունքում: Ալեքսանդր Մեծի պատմությունը կարող էր հենց այդ օրն էլ ավարտվել, եթե հակառակ թևում պարսիկները խուճապի չձատկվեին:

Երկրորդ՝ ի տարբերություն շատ այլ զորաբանակների, որոնց հաջողությունը սովորաբար պայմանավորված էր լինում ավարառությամբ, հայկական զորքերի ուսուցման և դաստիարակության հիմքում ընկած էր գաղափարաբարոյական և ֆիզիկական դաստիարակությունը, քանի որ դրսից անընդհատ սպառնացող ներխուժման վտանգը պահանջում էր համախմբվածություն և ամուր պաշտպանություն: Ինչպես վկայում են մեզ հասած պատմական տվյալները, հին դարերից հայկական ազգային և պետական համակարգում ուրույն դեր ու նշանակություն է ունեցել զինվորական դաստիարակությունը, որի հիմքում ֆիզիկականի հետ մեկտեղ խիստ կարևորվել է բարոյական, տիրասիրության և հայրենասիրական դաստիարակությունը: Ծնորհիվ դարերի հորձանուտով մեզ հասած ռազմախայրենասիրական այդ գեներ՝ 20-րդ դարավերջին մեզ պարտադրված Արցախյան ազատագրական պատերազմում Հայոց նորաստեղծ բանակը ոչ միայն փայլուն ու անթերի

իրականացրեց արցախահայության երազանքը և առաջին անգամ զիջելու փոխարեն թշնամուց ետ վերադարձրեց կորսված հայկական տարածքների մի մասը, այլև հաստատ ու աներեր կանգնած է դիրքերում և անթերի կատարում է իր սրբազան առաքելությունը՝ օտար ոտնձգություններից պաշտպանում է հայրենի հողը, պատիվն ու ապագան:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԱՆՎՏԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ

Այստեղ գոյություն ունի ևս մեկ նրբություն: Մեզանից շատերը կամ 1990-ականներին են մասնակցել մարտական գործողություններին, կամ 2016-ին, և այս առումով մենք բավականին շահեկան դիրքում ենք աշակերտներին ռազմահայրենասիրական դաստիարակություն տալու և հայ ռազմարվեստի պատմությունը ներկայացնելու համար, քանի որ այդ կարևորագույն իրադարձությունների կենդանի վկան ենք: Սակայն մենք հաճախ մեր գյուղի, համայնքի կամ մեզ ծանոթ մարդկանց մասին, նույնիսկ սեփական՝ մարտի դաշտում կատարած սխրանքները չենք ներկայացնում՝ մի կողմից համեստություն ցուցաբերելով, իրականում դրանով իսկ նսեմացնելով սեփական արարքի իրական նշանակությունը, մյուս կողմից՝ առաջնորդվում ենք այն սխալ կանխավարկածով, որ դա համարում ենք ոչ հեռավոր անցյալում տեղի ունեցած և բոլորին հայտնի փաստ: Մինչդեռ ժամանակն անցնում է, մեկը մյուսին հաջորդում են կյանքի բուռն իրադարձությունները, և դրանք սովորաբար մոռացության գիրկն են անցնում՝ առանց անհրաժեշտ մանրամասնություններով սերունդներին փոխանցելու:

Տեսեք ինչպիսի վտանգավորություն ունի մամն համեստ վերաբերմունքը: Նախ՝ դրա արդյունքում հայոց պատմության ռազմարվեստի հիշարժան դրվագները հանրությանը չեն ներկայացվում, ինչի արդյունքում մենք հուսնական ու հռոմեական ռազմարվեստի մասին ավելի շատ բան գիտենք, մինչդեռ անցյալի հայկական բանակների պատմությունը ցայսօր մնում է չպատմված:

Երկրորդ՝ ամենավտանգավոր դրսևորումն անմիջականորեն կապված է դարաբաղյան կարգավորման գործընթացի հետ: Մեր բազմաթիվ շփումներում չենք ներկայացնելով տեղի ունեցած իրադարձությունները, հակամարտության իրական կերպարը՝ մենք հակառակորդին հնարավորություն ենք տալիս իր հորինած ձևով հիմնախնդիրը ներկայացնել միջազգային հանրությանը: Նախահարձակ հակառակորդը, շնորհիվ մեր այդ բացթողման, և՛ 1990-ականներին, և՛ 2016-ի ռազմական գործողությունները ներկայացնում է որպես Հայաստանի կողմից իր դեմ ուղղված ռազմական ագրեսիա՝ իր բոլոր բացասական հետևանքներով: Հակառակորդի քարոզչության արդյունքում այնքան է խեղաթյուրվել դարաբաղյան հիմնախնդրի իրական կերպարը, որ միջազգային հանրությանն այն բացահայտորեն մատուցվում է որպես Ադրբեջանի միջազգայնորեն ճանաչված տարածքային ամբողջականությանն ուղղված Հայաստանի ագրեսիա: Արդյունքում հիմնախնդրի քաղաքական-դիվանագիտական անվտանգային բաղադրիչը կորցնում է իր դերակատարությունը, և Ադրբեջանի կողմից «արդարացիորեն» հակամարտության լուծման միակ ճանապարհ է հայտարարվում ռազմականը: Վերոնշյալն այնքան ակնառու դրսևորում է ստացել, որ դարձել է ՀՀ վարչապետի՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ արտաքին գործերի նախարարության աշխատակից-

ներին ուղղված հիմնական մեսիջը: «Առաջիկա շրջանի համար մեր մեծագույն խնդիրը հետևյալն է՝ միջազգային հանրության շրջանում բարձրացնել Լեռնային Ղարաբաղի հարցի էության վերաբերյալ տեղեկացվածությունը, որովհետև, ցավոք, այնուամենայնիվ, միշտ չէ և ամենուր չէ, որ մենք հանդիպում ենք այդպիսի տեղեկացվածության: Սա մի խնդիր է, որն իսկապես մեզ համար ունի ազգային անվտանգության նշանակություն: Մենք պետք է համոզված լինենք, որ միջազգային հանրությունը Լեռնային Ղարաբաղի հարցն ընկալում է հենց այնպես, ինչպես այն կա իր էության մեջ: Ցավոք, մենք այսօր մամն արձանագրում ամեն տեղ չէ, որ կարող ենք անել, և պետք է այս ուղղությամբ շատ լուրջ աշխատել»,- մասնավորապես նշել է Ն. Փաշինյանը:

Ո՞րն է պատճառը: 1988թ. ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո, երբ Մ. Գորբաչովը Լեռնային Ղարաբաղի Երևան, ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահն անակնկալի էր եկել, աղետի գոտու փոխարեն երևանցիների՝ իրեն ուղղված «Ե՞րբ է Ղարաբաղը միացվելու Հայաստանին» հարցից: Նույնն է վկայում ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովը:

Ծնորհիվ համազգային այդ գիտակցման՝ մենք 1990-ականներին կարողացել ենք հակամարտության իրական կերպարը ներկայացնել միջազգային հանրությանը՝ տարբեր միջազգային կառույցներում ապահովելով համապատասխան վերաբերմունք մեր և մեր իրավացի խնդիրների նկատմամբ:

Հիմնահարցի բուն էությունն այժմ էլ չի փոխվել, բայց մեր բացթողումների հետևանքով փոխվել են նույն խնդրի վերաբերյալ միջազգային հանրության ընկալումներն ու վերաբերմունքը: Հետևաբար, թերացումները շտկելու և հատկապես կործանարար հետևանքներից խուսափելու համար Ղարաբաղյան հակամարտությունը և Հայ ռազմարվեստի պատմության հատկապես նորոյայ դրվագներն անհրաժեշտ է դասավանդել ոչ միայն հանրակրթական դպրոցներում, այլև բուհերում, զինվորական կոլեկտիվներում և ողջ հասարակության մեջ ընդհանրապես՝ արցախահայության արդարացի պայքարի իրական կերպարը վերականգնելու համար: Այլապես հիբրիդային, ցանցային կամ այլ անվանումներ ստացած ժամանակակից պատերազմներում, որոնց մեջ անմիջականորեն ներքաշված են հայկական զույգ պետություններն ու ողջ հայ ժողովուրդը, պարտությունն անխուսափելի է:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ դարաբաղյան հակամարտության և Հայ ռազմարվեստի պատմության, մասնավորապես Արցախյան ազատամարտի հիշարժան դրվագների ներկայացումը կարևոր նշանակություն ունի մատաղ սերունդի ռազմախայրենասիրական դաստիարակության, հայի տեսակի ու արժեհամակարգի պահպանման ու զարգացման, անվտանգության ապահովման և վերջապես մեր ազգի առջև ծառայած համազգային խնդիրների, այդ թվում՝ դարաբաղյան հակամարտության լուծման գործընթացում: Դրանք կարելի է իրականացնել ուսուցման, ունակությունների կատարելագործման, երիտասարդին իր ուժերի նկատմամբ հավատ ներշնչելով և այդ գործընթացում անընդհատ օգտագործելով դաստիարակության բազմաբնույթ մեթոդները:

**Հրայր ՓԱՇԱՅԱՆ
ԱՊՅ դասախոս, ք.գ.թ., ղոցենյա
Լիանա ԲԱԼԱՅԱՆ
Ստեփ. հ. 2 հիմնական
դպրոցի ուսուցչուհի**

ԴԻՄԱՆԿԱՐ

ԱՆՍՆԱՑՈՐԴ ՆՎԻՐՈՒՄ-ՆԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ



Երբ մտնում էի գրել երիտասարդ ճարտարապետի Ազատամարտի անվան հ.1 միջնակարգ (հոսքային) դպրոցի պատմության և հասարակագիտության նվիրյալ ուսուցչուհի, ուսումնա-դաստիարակչական գծով դպրոցի փոխտնօրեն Վեհանուշ Գաբրիելյանի մասին, որն, ի դեպ, նույն կրթօջախի ոսկե մեդալակիր շրջանավարտ է, մտովի վերապրեցի մեր համատեղ աշխատանքային տարիները բանաստեղծուհի Մետաքսեի բառերով՝ այն ժամանակ Արցախական աշխարհի գյուղերի մայրաքաղաք համարվող բարեշեն, ծաղկուն ճարտարի՝ ազատամարտիկ-հրամանատար Արամայիս Գաբրիելյանի անունը կրող հ.4 հիմնական դպրոցում, երբ Արցախի պետական համալսարանի շրջանավարտ Վեհանուշ Գաբրիելյանը մանկավարժի իր գործունեության դեռ առաջին քայլերն էր անում: Սկսնակ ուսուցչուհին խնդրով, հուզումնառատ ապրումներով մեզ իր մուտքը լույսի, բարության սերմնացանի պատվաբեր ու պատասխանատու ոլորտ: Իսկ մենք ուսուցչական ողջ կոլեկտիվի աշխատողներով ողջունեցինք, բարի երթի սրտաբուխ ողջ սասցինք՝ նրա մեջ տեսնելով ապագա լավագույն մասնագետին: Մի քանի տարվա ընթացքում տողերիս հեղինակը, որպես փոխտնօրեն, առիթներ շատ է ունեցել ներկա լինելու նրա դասերին, որոնք ուսանելու, ընդօրինակելու շատ պահեր ունեին իրենց դիտողական, ժամանակաշունչ, բազմազան, հետաքրքրաշարժ կառուցվածք-հազեցվածությամբ առումով: Իրոք, ոգեշունչ նպատակամետ դասեր էր վարում նորավարտ խոստումնալից, եռանդալուստ ուսուցչուհին: Նրա յուրատիպ ստեղծագործական տարրերով հարուստ դաս-ստեղծագործություններից առավել շատ թևավորվում, բերկրանք ու հպարտություն էին ապրում նրա սաները, որոնք սիրելի ուսուցչուհուն միշտ էլ դիմավորում էին սրտաբուխ ժպիտներով, թարմ ու գունագեղ ծաղիկներով...

Տողերիս հեղինակը Վեհանուշ Գաբրիելյանին վաղուց գիտի, դեռ այն օրերից, երբ լինելով ավարտական քննությունների մասնակից՝ ականատես եղավ շրջանի տարբեր դպրոցների ոսկե մեդալի հավակնորդների մեջ նրա փայլուն գիտելիքներին:

Իսկ հիմա ուզում եմ մեջբերել մի հատված ճարտարի Ազատամարտիկների անվան միջնակարգ (հոսքային) դպրոցի մանկավարժական խորհրդի կարծիքից. «...Վեհանուշ Գաբրիելյանը լավագույն տիրապետում է իր մասնագիտությանը, սիրում է առարկան, ունի կայուն գիտելիքներ, անմնացորդ նվիրված է իր աշխատանքին: Չգտում է անպատասխան չեղելու դասավանդման ընթացքում առաջադրված ոչ մի հարց: Ուսումնական գործընթացի հմուտ կազմակերպիչ է՝ պահանջկոտ ու հետևողական:

Վեհանուշ Գաբրիելյանի սաները տարիներ շարունակ արձանագրում են բարձր արդյունքներ միասնական քննություններում, առարկայական օլիմպիադաներում: Պատմություն և Հայոց եկեղեցու պատմություն առարկաներից նրա աշակերտները մասնակցել են նաև օլիմպիադայի ՀՀ եզրափակիչ փուլին: 2017-2018 ուստարում նրա աշակերտուհի Արիաննա Սարգսյանը ցուցաբերել է բարձր արդյունքներ պատմություն և ՀԵՊ առարկաներից՝ հանրապետական փուլում պատմությունից արժանանալով գովասանագրի, ՀԵՊ-ից՝ առաջին կարգի դիպլոմի: Վերջինս ՀԵՊ-ից մասնակցել է նաև ՀՀ եզրափակիչ փուլին՝ արժանանալով երկրորդ կարգի դիպլոմի:

2017-2018 ուստարում Վ. Գաբրիելյանի սաները բարձր ցուցանիշներ են արձանագրել արտաքին ստուգման ժամանակ:

Բազմիցս պարգևատրվել է նախարարության և շրջվարչակազմի պատվոգրերով և 120-ից ավելի շնորհակալագրերով:

Իսկ 2018թ. հուլիսի 6-ին ԱՀ նախագահ Բակո Սահակյանի կողմից արժանացել է դրամական պարգևի և շնորհակալագրի»:

Դրվատանքի այս տողերին հավելենք դպրոցի տնօրեն Լեոնարդ Տոնյանի՝ Վեհանուշ Գաբրիելյանին տված բնութագրիչը. «...Վ. Գաբրիելյանը աշխատասեր, պրպտող մասնագետ է, որը երբեք չի բավարարվում իմացածով, մշտապես ձգտում է հարստացնել իր գիտելիքները: Նպաստում է աշակերտների մտածողության, աշխարհայացքի ձևավորմանը, մեծ տեղ է հատկացնում հայրենասիրական դաստիարակությանը, թեմաների արդիականացմանը: Դասապրոցներ դարձնում է հագեցած, հետաքրքիր և դիտողական: Ունի մարդկային լավագույն հատկանիշներ, ուղղուստ և խիստ պարզ սրտով: Նրա մոտ ամեն ինչ կշռադատված է ու նպատակային: Իր մասնագիտությանն ու գործին նվիրված մարդ, որն օժտված է մարդկային վսեմ հատկանիշներով: Ուսուցիչ-փոխտնօրեն, կոլեկտիվի սիրելին, յուրաքանչյուրի համար՝ լավ ընկեր ու խորհրդատու:

Ունի պատասխանատվության բարձր զգացում ինչպես իր, այնպես էլ հանձնարարված գործի նկատմամբ: Պատասխանատու է նրա սաների հաջողություններն առարկայական օլիմպիադաներում, միասնական քննություններում: Նվիրվածություն, հարգանք, կարգապահություն, խստապահանջություն, միաժամանակ՝ հոգատար վերաբերմունք դիմացինի նկատմամբ. այսպիսին է երիտասարդ մանկավարժ Վեհանուշ Գաբրիելյանը»:

Մի՞թե այս բոլորը չեն վկայում, որ երիտասարդ ուսուցչուհի, փոխտնօրեն Վեհանուշ Գաբրիելյանը կյանքի ճիշտ ու շիտակ ուղի է ընտրել: Եվ բոլորովն սիրով ու հավատամքով նվիրված է իր կյանքի պտեղիս դարձած մանկավարժի սրբազան գործին: Այդ այն դեպքում, երբ նրա ուսուցչական երթը դեռ կանաչ ընթացքի մեջ է:

Ջերմ ու իրական ակնկալիքներով, լավատեսությամբ հուսանք և հավատանք, որ նա մոտ ապագայում կունենա մտավոր-հոգևոր բարիքների առավել բեղուն շրջան: Եվ առավել արգավանդ ու հարուստ կդառնան նրա գալիք տարիները:

Կանաչ ու լուսաշող, արևոտ ճանապարհ քեզ, իմ երիտասարդ բարեկամ, հոգևոր աշխարհի անխոնջ ու նվիրյալ սերմնացան: Արևատություն, ամենայն բարիք քո լուսն ու պատվաբեր գործում:

Շնորհավորանք ՍԻՐՈՎ, ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅԱՄբ



«Ուսուցչին այն անհատն է, ով իր շունչը խառնում է հայոց սուրբ հողին և նմանվում արարողի: Նրա մեջ հորդուն է արարչության լույսը»:

Ուսուցչի նվիրումն ու պատասխանատվությունը անգնահատելի են: Նրա ջանքի ու

նվիրվածության շնորհիվ է դաստիարակվում կատարյալ քաղաքացի՝ հայրենամկեր ու բանիմաց: Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցում է աշխատում Կարինե Դադայանը, որը երկար ու ծիգ տարիներ նվիրումով ու պատասխանատվությամբ է կատարում իր առաքելությունը՝ դաստիարակելով առաքինի ու հայրենասեր սերունդ:

Իր կոչմանը հավատարիմ՝ համբերատարությամբ ու ջերմությամբ է ուսուցանում աշակերտներին, ծանոթացնում մեր պատմության անգնահատելի գոհարներին:

Կարինե Դադայանը ծնվել է 1959թ. մարտի 27-ին Դաշքեսանի շրջանի Ծարուկքար գյուղում՝ մանկավարժի ընտանիքում: Սովորել է ծննդավայրի դպրոցում, այնուհետ եկել է պատմական Արցախ, բարձրագույն կրթություն ստացել ու նվիրվել մանկավարժությանը:

1980թ. աշխատել է Ստեփանակերտի հ. 21 պրոֆտեխտունմարանում: 1984-ին տեղափոխվել է Ուզբեկստան:

Հայրենիքի կարոտը սրտում՝ նվիրյալ հայուհին 1992թ. վերադարձել է Հայաստան՝ չհարմարվելով օտար հողում երջանիկ ապագա կերտելու մտքի հետ և աշխատանքի անցել Կրասնոսելսկի շրջանի Արտամիշ գյուղում: Իսկ 1994թ. տեղափոխվել է Արցախ, աշխատանքի անցել Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցում, որտեղ աշխատում է առայսօր:

Կ. Դադայանը հմուտ մանկավարժ է, լավ գործընկեր, սիրող մայր ու հոգատար տատիկ: Հայրենասեր մանկավարժի հայրենասեր գավակներն այսօր հայրենիքի պաշտպան են, իսկ թոռները դաստիարակվում են նույն հայրենաշունչ ոգով:

Շնորհավորում ենք մեր հարգարժան գործընկերոջ 60-ամյակը, մաղթում երկարակեցություն, անսպառ եռանդ, նվիրվածություն:

Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Թովիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, ք. Ճարտար

ՀՈՒՆՆԱԿԱՆ ԾԵՐԵԿՈՒՅԹ ՄՊԻՏԱԿԱՆԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԳՊՐՈՋՈՒՄ

Մարտունու շրջանի Սպիտակաշենի նորակառույց, ամբողջովին կահավորված միջնակարգ դպրոցում սովորում է 56 աշակերտ, աշխատում՝ 22 ուսուցիչ: Դպրոցում բերեց կառուցվել է 2009թ. նոյեմբերին «Հայաստան» համահայկական հիմնադրամի Տորոնտոյի տեղական մարմնի և ԼՂՀ կառավարության համաֆինանսավորմամբ: Եռահարկ դպրոցն ունի հարմարավետ դասասենյակներ, լուսավոր գրադարան, հանդիսությունների ընդարձակ դահլիճ ու բարեկարգ խաղահրապարակ, բայց չունի մարզադահլիճ: Այն նախատեսված է 130 աշակերտի համար:

Մարտի 22-ի ուսումնական գործընթացը Սպիտակաշենի միջնակարգ դպրոցում ավարտվեց Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննես Թումանյանի և կոմպոզիտոր, էթնոհարմարավետ, բանահավաք, երգիչ Սողոմոն Սողոմոնյանի՝ Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյակներին նվիրված գրական-երաժշ-

տական գեղեցիկ ցերեկույթով, որը կազմակերպել էր դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Աննա Ջալալյանը՝ կոլեկտիվի աջակցությամբ:

Միջոցառումը բացեց դպրոցի ուսումնական գծով տնօրենի տեղակալ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Լուսինե Եսայանը: Նա նշեց, որ տարին թուրքական կամ Կոմիտասյան է, աստվածային երկու մեծություններ հայ ժողովրդի կյանքում, որոնց թողած ժառանգությունը ոչ միայն համաժողովրդական է, այլև համամարդկային: Ամենայն հայոց բանաստեղծ և հայ երգի Մետրոպ Մաշտոց, մեր ժողովուրդն այս հատկանիշներով է պատվել իր հանճարեղ գավակներ թուրքականի ու Կոմիտասի: Լ.Եսայանը շնորհավորեց բոլորին համաժողովրդական

տոնի առթիվ: Միջոցառմանը մասնակցում էին դպրոցի գրեթե բոլոր դասարաններից աշակերտներ: Նրանք իրենց անկեղծ երախտագիտության խոսքն ուղղեցին Մեծ Լոռեցուն ու Կոմպոզիտորին, որոնք կերներով և կոմիտասյան հոգեպարար երաժշտությամբ: Երկու կողմում երկու հզորների՝ Յովհաննես Թումանյանի և Կոմիտաս վարդապետի դիմանկարներն էին, որոնց հեղինակը դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհի Ջուլիետա Օհանյանն է:

Միջոցառումը մեծ հիացմունք ու բավականություն պատճառեց ներկաներին: Աշակերտները ելույթ էին ունենում ստեղծագործություններում ներկայացված ժամանակաշրջանին համահունչ տասագով: Դահլիճի անկյունում՝ բուխարիկի մոտ, լամպի լույսի տակ նստած զրուցում էին Հ.Թումանյանն ու Կոմիտասը: Երեխաները պատմում էին թուրքականի և Կոմիտասի կյանքի ու գործունեության մասին, արտասանում, որոնք զուգորդվում էին բեմականացմամբ: Անչափ ոգևորող էր «Քաջ Նա-

կերներով և կոմիտասյան հոգեպարար երաժշտությամբ: Երկու կողմում երկու հզորների՝ Յովհաննես Թումանյանի և Կոմիտաս վարդապետի դիմանկարներն էին, որոնց հեղինակը դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհի Ջուլիետա Օհանյանն է:

Միջոցառումը մեծ հիացմունք ու բավականություն պատճառեց ներկաներին: Աշակերտները ելույթ էին ունենում ստեղծագործություններում ներկայացված ժամանակաշրջանին համահունչ տասագով: Դահլիճի անկյունում՝ բուխարիկի մոտ, լամպի լույսի տակ նստած զրուցում էին Հ.Թումանյանն ու Կոմիտասը: Երեխաները պատմում էին թուրքականի և Կոմիտասի կյանքի ու գործունեության մասին, արտասանում, որոնք զուգորդվում էին բեմականացմամբ: Անչափ ոգևորող էր «Քաջ Նա-

կերներով և կոմիտասյան հոգեպարար երաժշտությամբ: Երկու կողմում երկու հզորների՝ Յովհաննես Թումանյանի և Կոմիտաս վարդապետի դիմանկարներն էին, որոնց հեղինակը դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհի Ջուլիետա Օհանյանն է:

Միջոցառումը մեծ հիացմունք ու բավականություն պատճառեց ներկաներին: Աշակերտները ելույթ էին ունենում ստեղծագործություններում ներկայացված ժամանակաշրջանին համահունչ տասագով: Դահլիճի անկյունում՝ բուխարիկի մոտ, լամպի լույսի տակ նստած զրուցում էին Հ.Թումանյանն ու Կոմիտասը: Երեխաները պատմում էին թուրքականի և Կոմիտասի կյանքի ու գործունեության մասին, արտասանում, որոնք զուգորդվում էին բեմականացմամբ: Անչափ ոգևորող էր «Քաջ Նա-



Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԲԱՑ ԴԱՍԵՐ

ՀՈՒՍԱԴՐՈՂ ՔԱՅՆԵՐ

Տարիներ շարունակ մանկավարժների մտահոգության առարկան է դարձել բնագիտական առարկաների հանդեպ սովորողների աստիճանաբար նվազող հետաքրքրությունը: Շատ քիչ երեխաներ են ընտրում այդ ուղղվածության մասնագիտություններ: Համակերպվելով, որ մաթեմատիկան, ֆիզիկան, քիմիան դժվարամատչելի առարկաներ են, ոչ ուսուցիչներն են շահագրգռված, ոչ էլ աշակերտներն են ջանք թափում դրանք ըստ ամենայնի ուսումնասիրելու համար:

Դպրոցների փնջային հավաքներում բազմիցս արծարծվել է այդ հարցը, լսվել են ուսուցիչների մտահոգություններն այդ մասին, բայց խնդիրն էլի մնում է չլուծված:

Ենթադրյալներում կազմակերպվող ընդօրինակման դասերի ու դրանց քննարկումների ժամանակ միշտ բարձրացվում է այդ հարցը, բայց պետականորեն մտահոգություն չի դառնում:

Ասկերանի միջնակարգ դպրոցում կազմակերպված դասերը, մասնավորապես որ Ասկերանի կրթության բաժնի վարիչ Կ. Մայիլյանն էլ ներկա էր, առիթ դարձան թե՛ քննարկումների և լուրջ քայլեր ձեռնարկելու: Մանկավարժների բարձրացրած խնդիրն ի պատասխան՝ Կ. Մայիլյանն ասաց, որ հարցը խոր արմատներ ունի. մինչև պետությունը ուսուցչի հանդեպ իր վերաբերմունքը չփոխի, մինչև ուսուցիչը հասարակության ամենահարգված դեմքը չդառնա, հարցը միշտ մնալու է օդում կախված: Եվ օրինակ բերեց Մոսկվայի՝ արմատներով արցախցի գիտնականների նախաձեռնությունը: Նրանք հատուկ ուշադրություն են ցուցաբերում այդ առարկաներից աչքի ընկած 11-րդ դասարանի աշակերտների և ուսուցիչների հանդեպ՝ նրանց համար սահմանելով պարզալճար ու ամսական կրթաթոշակ՝ նայած թե օլիմպիադայում երեխաները մրցանակային ինչ տեղեր են զբաղեցրել (1-ին տեղ՝ 100 դոլար, 2-րդ տեղ՝ 70, 3-րդ տեղ՝ 50): Չնայած այս ամենին, նշեմ, որ մեր ուսուցիչները, անկախ նման սպասելիքներից, աշխատում են տքնաջան կերպով՝ գրանցելով քիչ, բայց լավ արդյունքներ:

Մաթեմատիկայի դասը կազմակերպվել էր Ռուզան Չալոյանի մոտ՝ 6-րդ դասարանում: Ուսուցչուհին հետաքրքիր մուտք էր ապահովել՝ դասը սկսելով հավասարումների մասին պատմական ակնարկով: Այնուհետև տրված վարժությունները գրատախտակին լուծելով և պատասխանները համապատասխան տառերով փոխարինելով՝ աշակերտներն իրենք վերծանեցին դասի վերնագիրը: Նյութը մատուցվեց աշակերտների միջոցով, որոնք կրկնողական հարցերով վերհիշեցին անհայտ գումարելիք, հանելիք, արտադրիչը, բաժանարարը, բաժանելիք գտնելու կանոնները, որով էլ հող նախապատրաստվեց, որ նրանք քայլ առ քայլ յուրացնեն. ա) Ի՞նչ է հավասարումը: բ) Ի՞նչ է նշանակում հավասարման արմատ: գ) Ի՞նչ է նշանակում լուծել հավասարումը: դ) Ձևակերպել հավասարումը լուծելու հաշվեկանոնը: ե) Ինչպե՞ս է փոխվում գումարելիի նշանը, երբ այն հավասարության մի մասից տեղափոխում ենք մյուս մասը:

Ամրապնդումը ևս կազմակերպվեց ուսուցչուհու հնարամիտ մեթոդներով: Ցույց տալով թունամյանի հեքիաթների հերոսներին պատկերող նկարագրող պատկերներ՝ նա հայտարարեց, որ հեքիաթների հերոսները նամակներ են գրել երեխաներին: Վերջում բոլորին անակնկալ էր սպաս-

վում: Բացվում են գաղտնագրված փաթեթները՝ Վազգեն Սարգսյանի, Սամվել Բաբայանի և Կիտալի Բալասանյանի՝ Արցախի հերոսների լուսանկարներով, ու մեկնաբանվում է դրա խորհուրդը ևս. մարտի 5-ին ծնվել են մեր տարածաշրջանի այդ նշանավոր մարդիկ:

Ուսուցչուհու խոսքը, երեխաներին ոգևորելու հետաքրքիր մեթոդներն ապահովեցին աշակերտների ակտիվությունը դասին: Հաճելի է տեղեկանալ, որ դասարանից վեց աշակերտ մասնակցել է մաթեմատիկայի օլիմպիադային, որից երեք հոգի 13 միավորով մասնակցել է նաև համալսարանական փուլին՝ Մոնիկա Արզումանյան, Սվետլանա Շահրամանյան, Արեն Ալավերդյան, և երկու հոգի՝ Արեն



Ալավերդյանը և Սվետլանա Շահրամանյանը կրկին 13 միավորով անցել են եզրափակիչ փուլ:

Հուսահատության զգացողությունը որոշ չափով սկսում է նահանջել: Ուսուցիչները դա բացատրում են այն փաստով, որ վերջին տարիներին ճիշտ քայլ է արվել՝ մաթեմատիկայի օլիմպիադան սկսելով 5-րդ դասարանից, ինչն ավելի է նպաստում երեխաների ակտիվությանը: Որոշ հաջողությունների դեպքում էլ օգնում է խրախուսանքը:

Հաջորդ դասը կազմակերպվեց 3-րդ «ա» դասարանի դասվար Քրիստինե Օհանյանի մոտ կերպարվեստից: Դասարան մտնելիս թվում էր, թե մտել են մի փոքր պատկերասրահ, որտեղ բոլոր առարկաներն ու գույները դասավորված են բարձր ճաշակով ու նուրբ համադրությամբ՝ կազմելով ներդաշնակ ամբողջություն: Իհարկե, այսպիսի կախարհական աշխարհում, որտեղ իշխում են գույներն ու նրանց խաղը, երեխաներն իրենց ավելի ազատ ու անկաշկանդ են զգում, գործունեությունն էլ դառնում է հաճելի: Ուսուցչուհու մեղմ ու մեղեդային խոսքը ներկաներին տարավ մի հիասքանչ աշխարհ, արվեստի աշխարհը, որն ընդգրկում է պարզություն, ճշմարտություն ու բնականություն: Արվեստ և գեղեցկություն: Այս երկու ուժերից ավելի բարձր ոչ մի ուժ չկա: Կերպարվեստը չունի ճիշտ և սխալ: Այն բնական է և գեղեցիկ, իսկ գեղեցիկ է թվում այն ամենը, ինչը սիրով է արտահայտվում, պատկերվում ու արտասանվում: Այստեղ տեղին է Դ.Դիդրոյի խոսքը. «Նկարը ձև է տալիս երևույթին, իսկ գույնը՝ կյանք»: Յուրաքանչյուր գույն էներգիա է, և այն դրական կամ բացասական ազդեցություն կարող է թողնել մարդու վրա: Օրինակ՝ կարմիր սենյակում գտնվող մարդու սրտի աշխատանքը կարող է արագանալ, իսկ կապույտ սենյակում՝ հանդարտվել:

Այն բոլոր նպատակները, որ ուսուցչուհին դրել էր իր առջև, ունեցան իրենց տրամաբանական ավարտը: Չարգացնել

երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, աշխատասիրությունը, նպատակասլացությունը, հանդուրժողականությունը, ձևավորել գեղեցիկը տեսնելու, զգալու, զննհատելու, պահպանելու և արարելու ցանկություն ու կարողություն, դաստիարակել սեր բնության, հայրենի երկրի, բնաշխարհի նկատմամբ. սրանք այն առանցքային հարցերն են, որոնց անդրադարձավ ուսուցչուհին:

Երեխաները գիտեն կերպարվեստի բոլոր ճյուղերը, ժանրերը, հիմնական գույները, գույների ստացման եղանակներն ու մեթոդները՝ աղիտիվ (ավելացնելով գույների միախառնելու եղանակն է) և սուբտրակտիվ (պակասեցնելով գույների միախառնելու եղանակն է), ճանաչում են համաշխարհային արվեստի գործերն ու նրանց հեղինակներին, տարբերակում են ներկայացվող արվեստի տեսակները, գիտեն վեց հազար կտավի հեղինակ, ծովանկարիչ Այվազովսկուն, կողմորված խաչքարը Գոշավանքում, «Խաչքարերի պարը» Կեչառիսում, Երվանդ Քոչարի «Սատունցի Դավիթ»-ի՝ դեպի ետ թեքված թրի իմաստը (նույնը միշտ թիկունքից է հարվածում). նա թրով թիկունքն է պաշտպանում: Ինչպես նաև գիտեն գույներով պայմանավորված ծովերը՝ Սև, Սպի-



տակ, Կարմիր, Դեղին, և վարժ ցույց էին տալիս քարտեզի վրա: Ֆիզիկոլոգադարձը, որ ուսուցչուհին «հետաքրքրություն» էր անվանել, շարափված էր թունամյանական շնչով: Երաժշտության ներքո երեխաները՝ տարագրվ ու շարժված դեմքերով, ներկայացրին «Սուտլիկ որսկանը»: Սա ևս նպատակային էր, քանի որ այստեղ էլ ցուցադրվեց դեկորատիվ ժանրը (տարագ):

Երբ անցավ նոր մյուսի («Գարուն») հաղորդմանը, դասվարը հանձնարարեց նկարել գարուն: Բեթոկվենի երաժշտության կախարհական հնչյունների տակ սկսեցին աշխատել երեխաները. գույները շրայլորեն հոսում էին դասարանով: Աշխատում էին բոլորը՝ և՛ երեխաները, և՛ ուսուցչուհին: Նա էլ էր նկարում վահանակին՝ գույների հետ խոսելով և երեխաներին հրահանգելով, որ ստացված նկարը պիտի լինի թրթռուն, նուրբ, գեղեցիկ, պարզ գունապնակով. ծաղկուն ծառեր, քնքուշ ծաղիկներ, անամպ երկինք, կանաչ նորածիլ դաշտեր, թռչունների դայլայլ, տեղումներ, ծիածան, մի խոսքով՝ բնության գարթոնք: Հետո հնչում է դասվարի հոգեթով արտասանությունը Հովհաննես Շիրազի «Գարնանամուտ»-ի տողերով, և գարնանային առաջին ծաղիկները հասնում են դասին ներկա հյուրերին: Ավարտվում է ժրաջան աշխատանքը, ցուցադրվում են երեխաների նկարները՝ մե-

կը մյուսից գեղեցիկ, ճաշակով ու առիքնող. նրանք նկարել էին ոչ միայն թրթի, այլև ապակու և քարի վրա: Տեսնելով այդ ամենը՝ կարելի էր եզրակացնել, որ ուսուցչուհին էր նրանց վարակել իր բարձր ճաշակով ու շնորհքով: Համոզված ենք, որ նրանցից շատերը հետագայում կընտրեն արվեստի բնագավառը: Իսկ երբ ուսուցչուհին ցույց տվեց դասարանի պատին տեղադրված իր շնորհալի սանի՝ Ռաֆայել Դանիելյանի նկարները, կողքի պատին էլ իր նկարները, անխոս հասկացանք ամեն ինչ: Ահա ինչպես է ծնվում գեղեցիկը, ինչ տքնությամբ: Ու վերջում՝ ուսուցչուհու ուղերձը. «Գեղեցկությունը ծնվում է սրտում, արտացոլվում աչքերում, ապրում արարքներում: Թող գարունն իր ողջ գեղեցկությամբ փարվի ձեզ, որ ձեր աչքերը բարին առաքեն, և ձեր արարքները միշտ գեղեցիկ լինեն»: Դասարանից դուրս եկանք հանդարտված հոգով, գարնանային անուշաբույր ակնթարթներով հեղեղված:

3-րդ դասը 8-րդ դասարանում կազմակերպվեց անգլերենի ուսուցչուհի Ինգա Բաղդասարյանի մոտ: Նա խմբային աշխատանքով (թեման՝ «Լոնդոնի տեսարժան վայրերը») վեր հանեց այդ մեթոդով աշխատելու նրանց հմտությունները: Ակնհայտ զգացվում էր երեխաների ոչ միայն համակրանքը Լոնդոնի տեսարժան վայրերի նկատմամբ, այլև խոր սերը Հայաստանի բնաշխարհի հանդեպ: Համեմատության մեջ դրվեցին Սթոնհենջը և մեր Քարահունջը, որով էլ ուսուցչուհին հայրենասիրական խոր գաղափարներով տոգորեց սովորողներին. ուր էլ որ գնան, ինչ տեսարժան վայրեր էլ այցելեն, հիշեն, որ Հայաստանը իսկական թանգարան է՝ բաց երկնքի տակ: Նախդիրների ուսուցումը կազմակերպեց հետաքրքիր խաղի միջոցով: Նկարները պահելով դասասենյակի տարբեր մասերում՝ նա հայտարարում էր, թե որտեղ են դրանք, և աշակերտները պիտի գտնեին ու լրացնեին տեսարժան վայրերի շարքը: Այս «շրջագայության» շնորհիվ ուսուցչուհին զարգացնում էր աշակերտների լսողական և տեսողական հմտությունները: Սովորողների կողմից ինքնազննատուրը ևս դասի կարևոր բաղադրիչներից էր:

Քննարկումն ավարտելիս կրթության բաժնի վարիչ Կառլեն Մայիլյանը հայտնեց, որ շրջանի մասշտաբով առարկայական օլիմպիադային աշակերտների մասնակցության առումով որոշակի առաջընթաց կա. հանրապետական փուլին կմասնակցի 67 աշակերտ: Ընդ որում՝ մաթեմատիկայից հանրապետական փուլին մասնակցած տասը աշակերտներից չորսին իրավունք է վերապահվել մասնակցել եզրափակիչ փուլին (Հայաստան):

Վերջում, բացի նրանից, որ բոլոր ուսուցչներն էլ դասի ժամանակ տեղ էին հատկացրել այդ օրը ծնված նշանավոր մարդկանց, հանդիսավոր միջոցառմամբ դպրոցում նշվեց Վազգեն Սարգսյանի ծննդյան 60-ամյակը: Մարդ, որ իր արցունքները ներս էր սահեցնում՝ ուրիշներին պարզելու սեր և ուրախություն, որի գործունեությունը ազգին անմնացորդ նվիրվելու փառահեղ օրինակ է: Շատ էին հուզիչ ու վարակիչ դաստիարակության պահերը: Մասնակիցներն արժանվումս զննատեսից 33 և Արցախի հերոս, 33 ՊՆ նախարար, վարչապետ, «Ոսկե արծիվ» շքանշանի ասպետ Վազգեն Սարգսյանի վաստակը:

ԵՍ Է ՈՐ ԿԱ...

ԱՐԺԱՆԻՆ ՄԱՏՈՒՑԵԼՈՎ ՄԵԾՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Հայոց հոգևոր բերքի անդաստանը առատ էր 1869թ., գի ազգը ծնեց իր անկրկնելի մեծություններին՝ Հայաստանի երկու քներն իրար շաղախելու և ամբողջացնելու մայր հայրենիքը: Ազգը ծնեց իր երկու համաճարներին՝ մտքի աստղաբույլում փայլատակող Թումանյանին և հայ երաժշտության հավերժ մեծություն Մեծն Կոմիտասին:

Առաջինը իր ժողովրդի ազնիվ կենսագիրն էր, մյուսը՝ ազգի թոթոզների մեծ վերածանողը: Ինչպես երաժշտավորներն են ամենամեծն և վառ աստղը: Հայոց բախտորոշ ժամանակահատվածի խոսքի ամենավառ աստղը Հովի. Թումանյանն է:

Թումանյանի 150-ամյա հոբելյանական տարում ամենուր տոնախմբություններ են կազմակերպվում հայ կրթօջախներում: Ազգը մեծարում է իր ամենաի պոետին, իր սիրելի բանաստեղծին՝ Հովի. Թումանյանին:

Օրերս Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցում մեծ խանդավառությամբ կազմակերպվեց շքահանդես, որ պատշաճում է ազգային մեծ բանաստեղծի հոբելյանին: Միջոցառման կազմակերպիչը՝ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Օլյա Իշխանյանը, բեմ էր հանել միջին օղակի իր աշակերտներին ու ներկայացրել մի միջոցառում, որը, հիրավի, գովեստի է արժանի: Հանդերձավորանքը՝ զուտ ազգային, ոգին՝ թումանյանական, մթնոլորտը՝ տոնական: Ասմունքում են, երգում, բնորոշում պոետին, ընդգծում մտածողի վեհ մտքերն ու խանդավառում հանդիսատեսին. «Աշխարհում ամեն բան հեշտ է, մի բան է դժվար՝ մարդ լինելը: Դրա համար է, որ Համլետը երբ հորն ուզում է գովել, ասում է՝ մարդ էր նա: Հեշտ բան հո չի մարդ լինելը: Մարդ փնտրելիս էլ, երբ մեծ մարդու կարոտ ես զգում, աշխատում ես նույնիսկ գտածին, երածին մեծացնել, շատ բան տեսնել մեջը, բայց մի օր վերջիվերջո պատռվում է, բացվում է, տեսնում ես՝ շա՛տ հասարակ կտոր է՞»:



են, երբ ազգի ճակատագիրն էր մթագնվել: Հնչում է ազգի հոգեհանգիստը, արյունոտ եղձոնի քստմնելի իրականությունը՝ «որ չեն ու բարոյաբ, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով // Մարած են, մեռած, փռված ու ցրված հազար հազարով...»

Դարձյալ բացվում է հուշերի կծիկը, և ներկայացվում է ընտանեկան պատկերը՝ տեղեկություններ տալով Թումանյանի բազմամյա ընտանիքի և զավակների մասին. «Հայրիկը երեխաների անունները դնում էր հատուկ սիրով ու խնամքով: Քրոջս՝ Սեդայի անունը, շատ ուր եկավ Լևոն Շանթին. նա այդ անունով կնքեց «Հին աստվածներ»-ի հերոսուհուն: Մեր անուններից երեքը Բաֆֆու «Սամվել»-ից է առնված՝ Մուշեղ, Աշխեն, Նվարդ: Արեգի անունը դրել է Դազարուս Աղայանը: Հայրիկն Աղայանին գրել էր, թե մի երեխա էլ ավելացավ, և ստացել է պատասխան, թե աղջիկ է, անունը դիր Արեգնազան, թե տղա է՝ Արեգ: Մյուս տղաների անունները՝ Արտավազ, Համլիկ, հայրիկն իր դրամներից էր վերցրել»:

«Հայրիկը շատ հոգատար էր տասը երեխաներից ամեն մեկի հանդեպ: Երբ մեկը հիվանդանում էր, մոտեցնում էր, գրկում, գուրգուրում, հետո հարցնում էր. «Սիրուն ջան, ի՞նչ ես ուզում, որ բերես...»: Երբ ասում էինք՝ ոչինչ, բացակաչում էր. «Պահ, եղ ի՞նչ դժար բան ուզեցիր, ես ոչինչը որտեղի՞ց գտնեմ...»:

Թումանյանը լավատեսությամբ էր օժտված, որով էլ պայմանավորված էր լայն ժողովրդայնությունը: Նա հոգի էր դնում ամեն ինչի մեջ՝ վերջին եղածը սիրով հրամցնելով իրեն հյուրընկալվողներին:

Հնչում է մոլորակի համընդհանուր երազանքը՝ լինել հաշտ ու խաղաղ մարդկություն:

Հաջորդում է հայ գրականության գոհարներից մեկի՝ «Անուշ»-ի բեմականացումը: Փերիները, բազմած լուսնի նուրբ շողերին, հառաչում են ջահել սիրահարների վաղամեռիկ սերը: Ամալի տակից ջուր էր գալիս, և Անուշը կուժն ուսած՝ աղբյուրը ջրի էր գնում ջահել հարսների հետ: Ստեղծվում է կենդանի պատկեր, որ արթնացնում է հոգեպարար զգացողություններ: Տիպական էր Անուշի կերպարը սիրուն տենչալիս... Բեմագրի կառուցվածքն այնպիսին էր, որ զեղարվեստական պատկերներին հաջորդում են թումանյանական բնութագրումները, շրջասույթները, հուշերի շարանը: Եվ մեծ բանաստեղծը, չնայած կյանքում ապրել է դրամաներից ամենագարհուրելի՜ն՝ որդիների կորուստը, պայծառ ժպիտով, վեհ ու հանգիստ բնավորությամբ, զվարթ գրույցով թաքցնում էր իր վշտացած հոգին:

Հաջորդ տեսարանը «Թմկաբերդի առուն» պոեմից է՝ մարդկանց լավ ու վատ արարքների, նրանց գործերի և թողած

հիշատակների մասին:

Հետո դափնիքում ներկա աշակերտները ծանոթանում են Թումանյանի բնավորությանը՝ «Հակումներով արևելցի էր, կենցաղում՝ եվրոպացի: Շատ կիրթ, բարձր ճաշակ ուներ, սիրում էր ապրել հարմարություններով՝ լայն, առատ, մաքուր: Սիրում էր գեղեցիկ իրեր ու նկարներ գնել և զարդարել սենյակը: Միշտ գնում էր լավից լավը, գեղեցիկից գեղեցիկը, երբ պարապելու տրամադրություն էր ունենում, զբաղվում էր այդ իրերը տեղադրելով»:

«Սրտաբաց խառնվածք էր հայրիկը և ուզում էր, որ ուրիշներն էլ այդպես լինեն՝ աշխարհքին ու մարդուն նայել բարի սրտով ու պայծառ հայացքով»:

Հաջորդում է մարդուն ուղղված Թումանյանի կոչը՝ երկու օրվա ճամփան առանց ագահության, խաղաղ և ուրախ անցնելու, քանզի ոչ ոք իր հետ ոչինչ չի տանում այս կյանքից: Բեմ են մտնում չարչու կերպ մտած պարսից արքան ու նրան շրջապատող հայ զաղթականները: Շահ-Աբասը՝ ինքը վիշապ օձ, թել ու ասեղ ծախելու պատրվակով եկել էր իմանալու իր մասին հայ զաղթականների կարծիքները, որոնց տեղահանել էր իրենց բնիկ հողից ու օջախներից՝ Պարսկաստանը ծաղկեցնելու:

«Անեծք շահին, իրեն գահին», - վրդովվում են զաղթականները: Աբեն չարտում է Շահ-Աբասը, ցուլում է նաջաղը, և հայ ծերունին փռվում է գետնին: Այսպես ցուցադրվում է հայության վիճակը Պարսկաստանի տիրապետության տակ:

Շարունակվում են հուշերը, որին հաջորդում է «Կիկոսի մահը» հեքիաթի բեմականացումը՝ կողորհության գույներով, դպրոցականների կենդանի խաղով:

Կյանքի ձևը խաղ է անցավոր, իսկ իր հոգին՝ ծուլված տիեզերքի հոգուն. ահա բանաստեղծի հավերժությունը զաղտնիքը: Կյանքի մասին թումանյանական բնութագրումները ճշգրիտ են՝ «Մարդու կյանքի նպատակը երջանկությունն է: Եթե լավագույնի ձգտումը մարդու մեջ չկա, էլ ինչ կյանք»: Իսկ շնորհքը զարդարում է մարդու

թյունյանը կարևորեց մեծ բանաստեղծի դերը՝ որպես մտքի հանճարի և մեծ մտածողի:

Մի քանի օր անց դպրոցի կրտսեր օղակի աշակերտները ներկայացրին ևս մեկ ուշագրավ միջոցառում՝ պատշաճ Թումանյանի մեծությանը:

«Անուշ» օպերայի հնչյունների ներքո բեմ մտան 3-4-րդ դասարանների սաները: Բացման խոսքով հանդես եկավ տարրական մասի մեթոդիավորման նախագահ Գոհար Սարգսյանը:

Կարևորելով Թումանյանի դերը՝ նա մասնավորապես ասաց, որ հայ երեխաները Թումանյանի հետ են սկսում դպրոցի իրենց ճամփան, նրա հետ են սկսում գրել, և գրիչը կամաց-կամաց գրում է վարժ ու կարգին: Նրանք Թումանյանի հերոսների հետ սկսում են մտածել, թե ինչ է աշխարհը, գրուցում են կայտառ և աշխույժ գետակի հետ, վազում անսահման տեղերի հետևից, որ տեսնեն, թե քամին նրանց ուր է քշում-տանում:

Ասմունքը, երգը, պարը, մեծերի խոսքը հաջորդում են միմյանց: Ցուցադրվում է երաժշտական փոքրիկ դրվագ «Ամաստ» օպերայից:

Բեմականացվում է «Ոսկու կարասը» հեքիաթը՝ գեղարվեստական գեղեցիկ պատկերներով: Այնուհետև հնչում է «Խոսք սերմին» երգը: Սաները երգում են հայի ու Հայաստանի մասին, ու թեև դժվար է եղել մեր ճանապարհը, եկել է հայի դարը, հաղթանակի ժամանակը:

Հնչում է հզոր երաժշտություն. պարում են ազգային տարազներով աղջնակները:

Միջոցառումը բազմաշերտ էր. այն ամբողջացնում էր Թումանյանի ժառանգությունը՝ ընդգրկելով հայրենասիրական և ազգային ոգով գրված նրա ստեղծագործությունները:

Միջոցառումը կազմակերպվել է համատեղ: Հիմնական կազմակերպիչն էր դասավար Գոհար Ղարուշյանը, երգուսույցն ու շնորհալի պարուսույցը՝ Լիլիա Դավթյանը: Հեքիաթը բեմադրել են դասավարներ Սյուզաննա Հարությունյանը և Լիլիթ Համբարձումյանը:

Միջոցառման ավարտին դպրոցի փոխտնօրեն Լիլիա Մկրտչյանն ամբողջացրեց՝ ասելով, որ դասավարների գլխավորությամբ սաները հրաշալի ներկայացրին, թե ով է Թումանյանը:

Նա մեջբերեց մի հետաքրքիր գրույց, որ լսել է լռեցի մի մտավորականից: Նա պատմեց, թե ինչպես մի անգամ ընկերներով հանդիպեցին Դսեղ գյուղի մի երկարակյաց գեղջուկի՝ Արթին պապ անունով, որը Թումանյանի ժամանակակիցն էր: Սպասեցին, հանդից եկավ. նստեց բակի կոճղին, ու երբ հարցրին Թումանյանի մասին, ասաց, որ Օհանեսը մարդ չէր... ու սկսեց արձակել տրեխները: Անհամբերությամբ սպասում էին նրա խոսքի շարունակությանը: Քիչ անց նա շարունակեց. «Օհանեսը ժողովուրդ էր» ու շարունակեց արձակել տրեխների կապերը...



Այո, մեծն Թումանյանը ժողովրդի իմաստություն կրողն ու արտահայտիչն է:

Թումանյանապատումի էջը հարստացրեց դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի Կարինե Գասպարյանը, որը մինչև Շուշիի ազատագրումը ընտանիքով ապրում էր Կիրովականում և աշխատում Լոռու գյուղերից մեկում՝ Անտառանուտում: Նա, որ եղել է Դսեղում, ականածանքով պատմեց Թումանյանի մասին՝ ասելով, որ թանգարանի իրերը անջնջելիորեն մնացել են իր հիշողության մեջ: Տպավորիչ էր մի հայուհուն՝ գոթելնով գործած Թումանյանի պատկերը, որը շատ բնական է: Ուշագրավ են Թումանյանի իրերը, տան թոնիրը: Նա, տեղաբնակներին հետ գրուցելով Թումանյանի մասին, զգացել է, թե ինչպիսի մեծ ականածանքով են խոսում բանաստեղծի մասին՝ շեշտելով, որ Թումանյանը ազգի հպարտությունն է: Նա հավելեց, որ Դսեղից Կիրովական ընկած ճանապարհին կա մի աղբյուր, որ կոչվում է Անուշի աղբյուր...

Թումանյանի մասին ամեն մի պատմություն մասունք է, իսկ ինքը Թումանյանը՝ լուսահորդ սրբություն:

ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՄՈՒՍՆՈՒ ԿՈՂՄԻՅ ԿՆՈՋ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՂԵՐԻ ԸՈՒՐՉ



Լույս է տեսել Ալեքսանդր (Շուրա) Չարսաթյանի հերթական արձակ գիրքը՝ «Իմ կեսը» (Մայրամուտի խոհեք, Ստ., 2018թ.), որը նվիրված է կնոջը՝ Լարիսա Չարսաթյան-Մարտիրոսյանին: Տիկին Լարիսան ընտանիք կազմելու կենսագրականով բնութագրված է սակավ, բայց տիպականացված է գեղագիտական նկարագրություններով: Եձմարտախոս հեղինակն սկզբում իր առաջին սիրածին է նկարագրել, հետո իր անբաժան մասին՝ ցանկանալով ընդգծել իր բնական ու խոհուն զգացումները (երկու դեպքում էլ պահվածքով արցախյան համեստ օրիորդներ են եղել հեղինակի սիրած աղջիկները): Ա. Չարսաթյանի ընտանիքի անդամների որոշակի նկարների տեղադրությամբ գրքի կառուցվածքն ունի հետաքրքրություն ու ճանաչողական արժեք: Արցախյան գոյապայքարի հերոս զավակը տիպականացված է նկարով ու բավականին գեղագիտական, հրապարակախոսական նկարագրություններով, իսկ դուստրերը միայն օժանդակ լուսանկարային տեղեկատվական պատկերներով են ամբողջացված. սա գեղարվեստական գրքի կառուցվածքային հետաքրքրության չափավոր յուրահատկություն է:

Ա. Չարսաթյանը օր ծերության (ծնվել է 1936թ. Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղում) խոհեմ, իմաստասիրական, անաչառ Եձմարտախոսությամբ այս գրքով տվել է իր կենսագրականի մոտավոր պատմությունը (մանկությունը չի ներկա-

յացվել): Թեև գիրքը վերագրվում է կնոջը, բայց առավել շատ իրենից է խոսում՝ ցույց տալով կնոջ արժևորումն ընտանիքում իր տեսանկյունով (աննկատ, համեստ, բայց ընտանիքի ապահովման առումին գործերի ծանրաբեռնվածությունն իր ուսերին կրելով, մտավորական կինը ջանասիրությամբ նաև խնամել է ամուսնու՝ դարձն անցկացրած կույր տատիկին):

Ութերորդ տասնամյակն անցկացրած մտավորական Ա. Չարսաթյանը 1955-1956 թթ. եղել է եռացատկի գծով ԼԴԻՄ չեմպիոն: Ավարտել է Շուշի մանկավարժական տեխնիկումի ֆիզկուլտուրայի բաժինը, այնուհետև՝ Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմության բաժինը (հեռակա): Աշխատել է հայրենի գյուղում մինչև Արցախյան գոյապայքարի ժամանակ նրա բռնազավթվելը:

Ա. Չարսաթյանը ԼԴՅ գրողների միության անդամ է, հեղինակ է մի շարք գրքերի՝ «Դավիթ պապն ու նրա սերունդները», «Գերդաստանի ճակատագիրը», «Դավիթ պապի տոհմածառը», «Անմահ պատանին» և այլն: Քննարկվող «Իմ կեսը» գրքով հեղինակը նկարագրել է տեխնիկումում սովորելու տարիներին համակուրսեցուն՝ Անուշիկին, որին փոխադարձ սիրել է, բայց ուշադրությունը կենտրոնացրել է ուսման վրա: Օրիորդը նրան սիրահարվել է խելահեղ, անզուսպ սիրով, որից հիվանդացել է (դա եզակի երևույթ է, օրինակ՝ հանդիպում ենք Պերճ Պռոշյանի «Սոս և Կարդիթեր»-ում): Եվ ահա աղջիկ ծնողներն իրենց դստերը փրկելու ելքը գտնում են ուրիշի հետ ամուսնացնելով՝ ակամա սպանելով մոգական անարատ սերը, որովհետև Ալեքսանդր Չարսաթյանը սովորելու անզուսպ ցանկության պատճառով հրաժարվել էր իր սիրուց: Գրքի կեսը այսպիսի պատմություններ են: Հեղինակը դպրոցում աշխատելու ժամանակ պատահական զրույցով հեռակա ծանոթանում է Գերմանիայի դեմ մղված պայքարում հաշմված հերոս, աշխատասեր քեռի Արմենակ Մարտիրոսյանի դստեր՝ Բաբկի մանկավարժական ինստիտուտի ռուսաց

լեզվի բաժնում գերագանց սովորող ստեփանակերտցի Լարիսայի հետ: Արդեն տարիքն առած համեստ Ալեքսանդրը հավանում է և ամուսնանում: Նրա հարազատները Գորիսի Կոնհիժորից մեծաքանակ մարդկանցով մասնակցում են հարսանքին՝ իրենց անմիջականությամբ, հոգատարությամբ, ջերմագին վերաբերմունքով զարմացնելով փեսայի համագյուղացիներին:

Հարս Լարիսան աշխատանքի է անցնում դպրոցում՝ իր մարդկային, մանկավարժական, կանացի հատկանիշներով և զարմացնելով բարեմիտ համագյուղացիներին: Ալեքսանդրի տատը դարձն անցկացրած, հինգ տասնամյակից ավելի կույր էր, որին հարգանքով ազի (տատ) էին կոչում: Ուսուցչուհի Լարիսան ավանդական բարեմիտ հարսի մարդկային վերաբերմունքով նրա խնամքն իր ուսերին է վերցնում: Հարսով շատ ուրախացած ազին նրան կոչում էր իր ժամանակի, ըստ իրեն, լավագույն անվամբ՝ Սինավար (արաբերեն միմավեր՝ լուսավոր, իսկ ռուսերենից եկած Լարիսա՝ հունարեն՝ հաճելի, անուշաբույր) անունը ծեր կնոջ համար իժպարահունչ էր: Ծնվում է առաջնեկը՝ Իզորը (Արցախյան գոյապայքարի նահատակ, որն ի ծնե հետաքրքիր հատկանիշներով զարմացրել է շրջապատին: Նրա երեք քույրերը՝ Ծովիմար, Վարդուհի, Մարգարիտա, կազմել են իրենց հաջող ընտանիքները, ունեն երեխաներ, որոնք նկարներով ներկայացված են հիշյալ գրքում):

Լարիսան նվիրյալ զուգընկեր է: Երբ ամուսինը ծանր հիվանդ էր և բուժման համար պետք է տեղափոխվեր Երևան, վիրահատվեր, գիշեր ու գոյ մոտն էր: Նրան խնամել է ամեն ձևով: Այստեղ գրքի հեղինակը, որպես մանկավարժ ու փորձառու մարդ, իրոք, լրիվ համոզվել է նրա առաքինի, նվիրված, աշխատասեր, հայրենասեր ու մարդասեր լինելու մեջ: Եվ ամենայն անմիջականությամբ հուզաթաթալ խոստովանում է մեր այրերի հոգում եղած, բայց չարտահայտվող սրբությունները:

- Ես, որ քեզ չապաված խոսքերը սրտիս մեջ եմ պահել, որ ես քո կենդանն եմ, որ պարտք մնացի քեզ՝ իմ կես: Ներիր ինձ, ներիր, որ ուշ զգացի ու երգեցի քո սերը:

Կազդուրվելուց հետո ամուսինը բժշկի հետ ունեցած զրույցում երբ լսել է նրա ակնածանքը Լարիսայի հանդեպ, իսկույն խոստովանել է.

- Բժիշկ, դու ճիշտ ես: Ես երջանիկ եմ ու հպարտ, որ Լարիսայի մեծ կին ունեմ և ափսոսում եմ կորցրած տարիներս, որ ուշ զարթոնք ապրեցի: Բժիշկ, իրոք տիեզերքը նոր կենտրոն ունի, և այդ կենտրոնը ինձ համար Լարիսան է: Նա ինձ համար աշխարհի ամենագեղեցիկ, ամենաքնքաղ, հոգով ամենահարուստ էակն է:

Բժշկի խոսքը հիվանդապահ-ամուսնապահ Լարիսայի մասին ամփոփ ընդհանրացում է մեր բոլոր հոգատար կանանց նկարագրի.

- Շուրա, լավ իմացիր, որ Լարիսան է կենդանացրել քեզ: Ես ընդամենը վիրահատել եմ: Նա ամսից ավելի մոտոլ նստած խնամել է քեզ: Լարիսան քեզ փրկել է մահից: Նշանակում է՝ լավ օջախից է դուրս եկել, բարի ծնողներ է ունեցել, հալալ ու արդար կաթ է կերել: Նրա վերաբերմունքն ու զգացմունքներն առանձնահատուկ են և քնքուշ, եզակի կին է՝ հրեշտակ: Ես Լարիսայի պես նվիրված ու հոգատար կնոջ չեմ հանդիպել:

Արցախյան գոյապայքարի ընթացքում մենք շատ որդեկորույս մայրեր ունենք, բայց Լարիսան արժանացել է նաև խոհուն ամուսնու ամենաբարձր խոսքին. «Լարիսա՛, դու իմ կյանքի անբաժանելի մասն ես, իմ կեսը»:

Ալեքսանդր Չարսաթյանի անունը հանրահայտ Մակեդոնացու անունից է, որը հունարեն «ալեքսոս»՝ պաշտպանող, «անդրոս»՝ մարդկանց բացատրություն ունի: Իրոք, այդպիսին է մեր Շուրան:

Ա. Չարսաթյանի «Իմ կեսը» մի յուրատիպ գիրք-խոստովանություն-նվեր է մեր հարգարժան կանանց:

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
Բ. Գ. Ք.

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍ. ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 միջնակարգ հոսքային դպրոցում 10-12-րդ հունամիտար հոսքի դասարանների աշակերտների ուժերով անցկացվեց Թումանյանական ընթերցումներ: Դասավանդող՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Արմինե Մովսիսյանը, թվարկելով մնաց ղասի անցկացման նպատակները, նշեց, որ ավագ դպրոցում գրականության համակարգված դասընթացի ուսումնասիրման արդյունավետությունը և աշակերտների ինքնուրույն հետազոտական գործունեության զարգացումը պայմանավորված են այն նոր մոտեցումներով և ուսուցման մեթոդների ներդրումով, որ դպրոցի առաջ դրել են ժամանակակից կրթական չափորոշիչները: Ավագ դպրոցում հայ գրականությունը ներկայանում է որպես համակարգված դասընթաց: 10-12-րդ դասարանների գրականության համակարգված դասընթացի ուսումնասիրման համատեքստում գրողի կենսագրության ուսուցման շրջանակներն ավելի ընդարձակ են և հետապնդում են մի շարք նպատակներ: Ծրագրային պահանջներից մեկն այս դասարաններում խոսքային շարադրանքի կամ համակարգչային էջի տեսքով գրողի դիմանկարի ստեղծումն է:

Նման շարադրանք կամ համակարգչային էջ ձևավորելու համար անհրաժեշտ է պահանջվող տեղեկատվական նյութերի ձեռքբերում, որը կարող է իրականացվել միայն աշակերտների ակտիվ որոնողական և հետազոտական աշխատանքի կազմակերպումով: Աշակերտակենտրոն գործընթացը, որ կառուցողական կրթության առաջադեմ ու ժամանակակից սկզբունքներից է, շեշտը

դնում է հենց գործունեության այս կարգի մեթոդի վրա: Այսինքն՝ աշակերտները ներգրավվում են աշխատանքային այնպիսի ձևերի, առաջադրանքների կատարման մեջ, որոնք ոչ միայն նրանց մղում են տեղեկատվություն ստանալու իրենց անհրաժեշտ նյութերից, այլև նպաստում են ինքնուրույն մտածողության զարգացմանը, միմյանց հետ աշխատելու և միմյանցից սովորելու կարողությունների ձևավորմանը: Գրողի մասին տեղեկատվական նյութեր ձեռք բերելուց հետո նրանք համատեղ աշխատանքային գործունեության արդյունքում կազմում են գրողի դիմանկարն ըստ ներկայացվող պահանջների: Իսկ ավանդական ուսուցումը, որ ուսուցչակենտրոն սկզբունքի հիման վրա էր կառուցված, նման փաստերը, տեղեկատվական նյութերի հայթայթումը թողնում էր ուսուցչին: Աշակերտը հանդես էր գալիս լսողի և կրկնողի դերում, խթանվում էր նրա մեխանիկական հիշողությունը, որը կարճ կյանք ունի և չի կարող ինքնուրույն մտածողությամբ ու ստեղծագործական գործունեությամբ մասնակից դառնալ շարունակական կրթության տևական գործընթացին:

Աշակերտներն ուսումնասիրել են հետևյալ թեմաները՝

- Թումանյանի նախնիները
- Թումանյանը՝ որպես տան սիրելի զավակ
- Ինքնակենսագրություն
- Հետաքրքիր դրվագներ Թումանյանի կյանքից
- Թումանյանի ամուսնությունը
- Թումանյանի կյանքի վերջին օրերը

- Թումանյանի սիրտը
- Մեծ եղբունը և Թումանյանի ընտանիքը
- Թումանյանը և իշխանուհի Մարիամ Թումանյանը
- Թումանյանը և երաժշտությունը
- Մեծերի հուշերը Թումանյանի մասին
- Թումանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը
- Թումանյանը Մետեխի բանտում
- Թումանյանը՝ մեծերի գնահատմամբ
- Թումանյանի մամուլները
- Թումանյանը ավանդում է

Աշակերտները գեղեցիկ ներկայացրին Թումանյանի կյանքի հիմնական փաստերը, ապրած ժամանակաշրջանի հոլովություն գրողի ունեցած տեղն ու դերը, գրական ժանրագրություն, արժևորեցին ազգային գրականության զարգացման մեջ նրա ստեղծագործական հետադիմ, Թումանյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, ժ-

ղովածունները, Թումանյանի ստեղծագործությունների ընդհանուր պատկերը՝ համեմատելով գրողի բանաստեղծությունների, պոեմների, լեզբերի, քառյակների արտասանության, երգերի հետ:

Աշակերտները խմբային հետազոտական-տեղեկատվական բավականին աշխատանքի միջոցով ուսումնասիրել են գրողի կյանքի, անցած ստեղծագործական ուղու, նրա գրական հայացքների մասին տեղեկություններ պարունակող փաստագրական և գեղարվեստական, տեղեկատվական աղբյուրները, գրողի նամակները, նրա մասին հուշերը, ինքնակենսագրականը, ճանաչված մարդկանց կողմից տրված գնահատականները: Հետազոտությունների հիման վրա կատարել ընդհանրացում և կազմել գրողի նախնական դիմանկարը:

Նման ղասի օրինակով ցույց տրվեց, թե ինչպես է ստեղծվում գրողի դիմանկարը. ոչ թե ուսուցչի դասախոսության, այլ աշակերտների հետազոտական աշխատանքի արդյունքում կազմակերպվող հաղորդումների միջոցով (ուսուցչի ուղղորդմամբ): Որպես ուսումնական նյութ են ծառայել Թումանյանի և նրա հարազատների լուսանկարները, հանրագիտարանները, գրքեր, տեսասահիկներ, տեսաերիզ, ձայնակապույտ, համացանց, պատի թերթեր, ասույթներ: Կիրառվել են տեղեկատվական-հետազոտական, զարգացնող ուսուցման, կոլեկտիվ համագործակցության տեխնոլոգիաներ:

Ս. ՂԱԲՐԵՆՅԱՆ



ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ՆՐԱ ՏՈՂԵՐԸ ԵՆՎՈՒՄ ԵՆ ՍԻՐՈՒՅ ԱՌ ԱՐՑԱԽ



Գարուն կգա... Ու ծիծաղում են նրանք, նահատակները ազատության...

Գրքում բանաստեղծուհին առանձին շարքով խոհափիլիսոփայական խորագրի ներքո գետեղել է բանաստեղծություններ, որոնց համար որպես բնաբան է ընտրել «Դեպի վե՛ր... դեպի վա՛ր... դեպ անհուն... դեպ եզե՛րք... դեպի ո՛ւր, չգիտենք... կյանքի չուն կծգի...» տողերը:

Աստված, աստված, լեռ բարեգուր, Տուր ինձ գույնն իմ կարոտի: Օ՛, Տեր իմ, փրկիր քո ստեղծածին...

Ուշագրավ է, որ Ջ. Բալայանն իր բանաստեղծություններով մշտապես արձագանքում է Արցախի յուրաքանչյուր բախտորոշ իրադարձության, և ապրիլյան պատերազմի թեման ևս չփրկեց նրա ստեղծագործական ծիրից:

Սահմանամերձ գոտիներում, թե՛ մարտերում, տղերք, Լեզենդ դարձաք արիության, Սուրբ նահատակ դարձաք: Մեն-մենակով դարձաք զորաբանակ անկախու, Յետ նահանջել չկար՝ դարձաք հաղթաբանակ...

Ազգի, պետության հաղթանակների երաշխիքը ազգային միաբանության, միասնականության մեջ տեսնելու դավանանքով է շնչում նրա գրական գործունեությունը:

Յեղիմեայի պոեզիան վերլուծել և գնահատել են նրա գրչակից ընկերները: Գրող, լրագրող, բանաստեղծ Կին Գաբրիելյանը, անդրադառնալով նրա պոեզիային, մի առիթով գրել է. «Թեմատիկ տարբերակումներն աչքի են ընկնում միայն արտաքուստ առանձնահատկությամբ, դիմամիկ կենսափիլիսոփայությամբ դրանք համարյա նույնն են: Եվ գուցե թե հենց սրա մեջ է Ձինախյա Բալայանի ինքնատիպությունը:

Բնորոշ են հետևյալ տողերը. Թողեք, որ հնչի «խմբերգը» Սիրո

Ու Սիանություն, «խմբերգը» Յաղթության ԲԻՆՅԱԼ, ՅԱՅԱ, ԹՈՐԳՈՍԱ ԵՐԿՐԻ ՑԱՅՊԱՊՈՒՅՆԵՐԻ...

Բանաստեղծ Ռոբերտ Եսայանը նրա պոեզիայում ավելի շատ նկատում է ցավի և տառապանքի, պայքարի շեշտերը՝ հեղինակին բնորոշելով որպես «ցավի և պայքարի նկարագիր»: «Պոեզիան լույսի ակունք է, որից բխում է ազատության տարերքը և միանում հոգու իրականությանը: Յոգին վերածնվում է, ապրում նոր կյանքով, Ջ. Բալայանը գրականություն է բերում իր հոգու իրականությունը: Նա, գրում է Ռ. Եսայանը, իր պոեզիայում ձգտում է իրերին նոր անուն տալ՝ նրանց ընծայելով խոհափիլիսոփայական շնչավորում»:

Յիրավի, նրա այդ իրականությունը շնչավորվում է տառապանքով, որից, սակայն, չի ընկճվում, քանզի պայքարող տեսակ է, և այդ իրականության տարածքներում հարատև հնչում է միասնության, միաբանության կոչը՝ որպես ազգի առջև ծառայած մարտահրավերները հաղթահարելու, ասել է թե՛ հաղթանակի երաշխիք:

«Ամուր պետության հիմքը ազգային միասնականության գաղափարախոսությունն է՝ բոլոր կարգի թշնամական դրսևորումների դեմ, ազգային միասնական ճակատ ստեղծելը՝ զերծ ներկուսակցական, ներքաղաքական առճակատումներից, օտարամուտ քաղաքական դավանանքներից, քաղաքական եսասիրական շահարկումներից»,- մի առիթով գրել է նա:

Յեղիմեայի երկրորդ գիրքը՝ «Վիրակապ չիանդուժող թե՛ր» խորագրով պատմվածքների ժողովածու, հրատարակվեց 2003 թվականին: Գիրքը ողջունեց և գնահատեց արձակագիր, հրապարակախոս Մաքսիմ Յովհաննիսյանը՝ գրելով. «Պատմվածքների ժողովածուն լուրջ հայտ է և դատելով թվագրություններից և առավելապես հախուռն, բևեռացված զգացումների բռնկումների բնույթից՝ դա, ըստ էության, ջահել մատակի արշավի դուրս գալու բնագր է: Սիրո աղբյուր, սիրո ճիշտ, սիրո ողորում... Լիքը զգացմունքը երբեմն խոսքը կիսատ է թողնում: Իսկ զգացմունքին առավելագույն էներգիա հաղորդելու ցանկությամբ գույնին երանգ է հավելում. բառային կուտակումների արանքից ծնվում է ամոթխած զգացմունքը, որը հայտնի է վաղուց անտի, բայց որը միշտ էլ նոր է մնում, որովհետև ծնվում է նորից...»:

Գեղարվեստական պատկերներով, մարդկային ապրումների և հույզերի արտացոլումներով ուշագրավ են «Կակաչները», «Տատս», «Սիրելի հենց ինքը հաղթանակ է», «Լեռնայան սիմֆոնիա» և ժողովածուի այլ պատմվածքներ: «Մեղեդի գաղտնատեսության» խոկումները... ստեղծագործության մեջ գրույց է բացել Արցախի խորհրդանիշ «Մենք ենք, մեր սարերը» հուշակոթողի տառ ու պապի կերպարների հետ և սեր խոստովանելով հանդերձ պատմում է իր կարոտների, երազների ու տառապանքների մասին՝ երկրպագելով նրանց վսեմությանն ու առաքինությանը:

Ջ. Բալայանի «Արցախը 19-րդ դարի գրականության մեջ և մշակություն» գրա-

կանագիտական աշխատությունը լույս է տեսել 2004 թվականին: Ուսումնասիրությունը նվիրված է Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպին: Յեղիմեայի պատմագիտական քննական վերլուծության է ենթարկել վեպը՝ բացահայտելով պատմական երկին հատուկ ժանրային ինքնատիպ միտումները, կերպարային, սյուժետային, պատմական իրողությունների ներդաշնակությունն ու գեղարվեստականացման հնարները: Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը գրքի առնչությամբ նկատել է. «Ձուբովի վեպը Ձինախյա Բալայանը քննաբանում է բնագրագիտական լայն առնչությունների մեջ՝ ստեղծելով պատմաբանասիրական մի ուսումնասիրություն, որը, թեմայի ընդհանուր կառուցվածքի մաս լինելով հանդերձ, ունի ամբողջական ու վերջավորված գիտադրույթ: Յեղիմեայի բացահայտում է բազմաթիվ նորահայտ էջեր գրողի կենսագրության, վեպի ստեղծագործական պատմության, ինչպես նաև մեկնությունների փոխհարաբերությունների ու երկրամասի ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ...»:

Աղբյուրագիտական հմտությամբ կատարված աշխատանքը մի յուրօրինակ գիրք է, որն ընթերցողին ուղեկցում է դեպի հայրենասիրություն, դեպի պատմական Արցախ:

Ջ. Բալայանի գրականագիտական ուսումնասիրությունների արդյունք են նաև «Սերգեյ Սարինյանի քննահամակարգը» (2006թ.), «Մեսրոպ Մաշտոց երևույթը և հայոց ազգային գաղափարաբանության բարդույթը» (2008թ.), «Մուրացանի գեղարվեստի պարադիգմաների փիլիսոփայական մեկնությունները» (2014թ.) գրքերը: «Սերգեյ Սարինյանի քննահամակարգը» աշխատության մեջ առաջին անգամ Ջ. Բալայանը գրքի տեսքով մեկնություն և գնահատման է ներկայացրել հայ գրաքննադատական մտքի ակնավոր ներկայացուցչի՝ ակադեմիկոս Ս. Սարինյանի քննահամակարգի սահմանները: Յեղիմեայի, գրքում բնորոշելով Ս. Սարինյանին, գրում է. «Ս. Սարինյանը՝ աստվածային ներշնչանքի գիտնական-նորարարը, երևույթ է, որը ժամանակի բարդ ու հակասական հոսքերում համառոտ, մի անմեկնելի սենթիմոնիզմով ձգտել է գրականագիտության, հայ ազգային գաղափարաբանության, գրականության փիլիսոփայության, քննադատական-տեսական մտքի պատմության մեջ համաշխարհային գիտական առաջավոր մտքի համահունչ և զուգահեռաբար որոշակի սկզբունքներ, հիպոթեզներ առաջադրել, ստեղծել ու հաստատել և դրանք նոր ձևերով, նոր ըմբռնումներով տանել դեպի գիտականացում»:

Բեղում է Ջ. Բալայան ստեղծագործողի, բանասերի, գրականագետի գրիչը, և պրպտուն՝ նրա միտքը: Ստեղծագործական աշխատասիրությանը զուգահեռ նա ակտիվ է նաև Արցախի հասարակական, մշակութային, գիտամանկավարժական կյանքում: Մոտ քառասուն տարվա գիտամանկավարժական վաստակ ունեցող մտավորականի գործերի մի մասը դեռ անտիպ է և սպասում է տպագրության:

Զարինե ՍԱՆԱՋՅԱՆ Բ. Գ. Թ., ԱրՊՅ դասախոս

Հորդորակ

ՊԱՇՏՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՍԱԹՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վերջին տասնամյակներում հայերեն փաստաթղթերում ամսաթվի, տարեթվի գրության անմիօրինակություն է առաջացել: Դա նկատվում է հատկապես այն դեպքերում, երբ վերջիններս քերականորեն չեն կապվում խոսքին, օրինակ՝ ձևաթղթերում: Յանդիպում են գրության այսպիսի ձևեր՝ 15 հունվար, 2018թ. կամ 15 հունվարի, 2018թ. կամ 15-ը հունվարի, 2018թ., կամ հունվար 15 2018թ. կամ հունվարի 15 2018թ., կամ «15» հունվար

2018թ. կամ «15»-ը հունվար 2018թ. կամ 15-ը հունվար 2018թ. կամ 15/01/2018թ. կամ 15-01-2018 կամ 15.01.2018 և այլն: Նկատելի է, որ ամսանվան (նաև ամիսը ցույց տվող թվի) և տարեթվի միջև ստորակետ երբեմն դրվում է, երբեմն՝ ոչ, ամսվա օրը ցույց տվող թիվը հաճախ առնվում է չակերտի մեջ, թվից հետո գրվում է -ը և այլն: Յամենատաբար նոր իրողություն է, որ օր-ամիս-տարի ցույց տվող թվերն իրարից առանձնացվում են թեք

գծով, այլ ոչ թե միջակետով: Այս անհարկի բազմաձևությունը վերացնելու և գրության որոշակի միօրինակություն հաստատելու նպատակով

ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ՝

խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը չակերտի մեջ չառնել և գրել առանց հոդի, իսկ ամսանունը՝ թեք (սեռական) հոլովածով: Պահպանել ամսաթվա-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Այսպես՝ 15 մայիսի 2018թ. կամ՝ 15.05.2018: Ամսանունը գրել փոքրատառ:

Թույլատրելի է նաև ամսանուն ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018թ.: Շարադատության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018թ.: Ամիս-ամսաթիվը և տարեթիվը իրարից ստորակետով չառնալով: Օրինակ՝ 3 հունվարի 2019թ. կամ՝ 2019թ. փետրվարի 1:

Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ և ոչ թեք գիծ կամ զծիկ: Օրինակ՝ գրել ոչ թեք 25/01/2019 կամ 25-01-2019, այլ՝ 01.2019: «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

ԼԵՉՎԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱՅԱՅՎԵՑ ԵՆԵՍՊԻՐՆ ԻՐ ՈՂՋ ՎԵՂՈՒԹՅԱՄ

Երջանի՞կ եմ ես, որ սիրում եմ և սիրվում անդադար, երբ չեմ մոռանում և չեմ մոռացվում սիրելուս համար:

Ուիլյամ Շեքսպիր

16-րդ դարի վերջը և 17-րդ դարի սկիզբը համարվում է անգլիական գրականության ոսկեդար, որը կոչվում է Վերածննդի ժամանակաշրջան, և այս ամենը՝ շնորհիվ անգլիացի մեծ բանաստեղծի, դրամատուրգի, դերասանի, ում անունն է Ուիլյամ Շեքսպիր: Նա ամենալավ թատերագիրն է, որը երբևէ ծնվել է աշխարհում, և առաջուր չի բացահայտվել Ուիլյամ Շեքսպիր ֆենոմենը:

Շեքսպիրը սիրո և գեղեցկության մեծ բանաստեղծ է, և պատահական չէ, որ մարտի 8-ին՝ Կանանց միջազգային տոն օրը, Ասկերանի եղմուն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցում կազմակերպվեց գեղեցիկ միջոցառում՝ նվիրված մեծանուն մարդուն:

Ներկա էին դպրոցի տնօրինությունը, ուսուցիչներ, աշակերտներ, և զորամասի զինվորներ:

Անգլերենի ուսուցչուհի Շուշան Մինասյանը, ում նախաձեռնությամբ դպրոցի 10-րդ բնագիտական հոսքի աշակերտները նախապատրաստել էին այս հիանալի միջոցառումը, համոզեց եկավ ողջույնի խոսքով:

Շեքսպիրը խոշորագույն անգլիալեզու գրողն ու աշխարհի լավագույն դրամատուրգն է: Նա հաճախ կոչվում է Անգլիայի ժողովրդական բանաստեղծ: Նրա պիեսները թարգմանվել են ժամանակակից բոլոր լեզուներով և բեմադրվում են ավելի հաճախ, քան այլ դրամատուրգների ստեղծագործությունները:

20-րդ և 21-րդ դարերում Շեքսպիրի ստեղծագործությունները մշտապես բեմադրվում են և վերաբացահայտվում գիտական ու թատերական նոր շարժումների կողմից: Նրա պիեսները շարունակում են մեծ ժողովրդականություն վայելել և ուսումնասիրվում, բեմադրվում ու վերա-

մեկնաբանվում են մշակութային ու քաղաքական տարբեր համատեքստերում:

Դպրոցականները սահուն անգլերենով ներկայացրին Ուիլյամ Շեքսպիրի կյանքն ու գործունեությունը:

Շեքսպիրի ստեղծագործությունների մեծ մասը գրվել է 1589-1613 թվականներին: Նրա վաղ ստեղծագործությունները եղել են հիմնականում կատակերգություններ և պատմական պիեսներ, որոնք դասվում են այդ ժանրերի լավագույն նմուշների շարքը:



Շեքսպիրի գլուխգործոցներն են «Համլետ», «Օթելլո», «Լիր արքա», «Մակբեթ», «Անտոնիո և Կլեոպատրա», «Կորիոլանոս» ողբերգությունները: Դրանցում պատկերված են բացառիկ անհատականություններ՝ իրենց ընդգրկում, ընդհանրացնող մտածողությամբ, խորունկ, գործող զգացումներով, անհատապաշտական և մարդասիրական մղումների տառանումներով: Նրանք ունակ են սեփական ցավի ու ճակատագրի հորձանում անզան տեսնել հասարակական, համամարդկային երևույթներ: Նրանց հակադրությունն ու գոտեմարտը հասարակական ուժերի հետ ավարտվում են ողբերգությամբ թե՛ իրենց, թե՛ շրջապատի համար: Ողբերգությունների գլխավոր հերոսները գտնվում են անհատական, ընտանեկան, հասարակական, քաղաքական, ազգային-ռասայական հակամար-

տությունների այնպիսի հանգուցակետերում, երբ նրանց անհատական հատկանիշները, հարաբերություններն իրենց միջավայրի մյուս անձանց հետ, տիրապետող ըմբռնումների և օրենքների հետ պայմանավորում են նրանց ճակատագրի ելևէջները:

Յուրաքանչյուր ողբերգության մեջ Շեքսպիրը բացահայտում է անհատի ներաշխարհին և մարդկային հասարակությանը վերաբերող անվիճելի ճշմարտություններ: Անարդար հասարակարգն ուղղելու համար անբավարար են հանձարեղ և ազնիվ անհատի՝ Համլետի և նրա հավատարիմ կուսակցի մտքի լարումն ու զործուն վարքը: Հաշվեհարկ, խարդախ մարդկանց միջավայրում Օթելլոյի և Դեզդեմոնայի անբասիր սերն անկարող է գոյատևել: Որպեսզի Լիրն արդարամիտ արքա դառնա, պետք է կորցնի իր գահը, ապրի անօթևան, անթի մարդկանց կյանքով: Մարդուն ըստ հարստության և դիրքի գնահատող հասարակարգի օրենքները Մակբեթին մղում են խլելու իրեն չպատկանող գահը, և նա իր ունեցած լավագույնի հետ կորցնում է նաև կյանքը:

Անտոնիոն և Կլեոպատրան, որ աշխարհի կեսի տիրակալներն են, չեն կարող անմնացորդ հանձնվել իրենց զգացմունքներին, պարտավոր են ենթարկվել այն աշխարհի օրենքներին, որոնց վրա կարծես թե իշխում են: Կորիոլանոսի ուղղագիծ շիտակությունը մերժվում է հռոմեական պլեբսի կողմից, մինչդեռ նրանց միջև համարադրություն չէր լինի, եթե նա ընտրեր կեղծավորության ուղին. ողբերգական ընթացք է ստանում թե՛ հերոսի, թե՛ ժողովրդի ճակատագիրը: Հակասականության անբակտելի հանգույցներ են այս ողբերգությունների մաս երկրորդական ու երրորդական հերոսների բնավորություններն ու ճակատագրերը:

Բազում տոնետների հեղինակ է Շեքսպիրը, որոնք ուղղված էին մի առեղծվածային կնոջ՝ սև մազերով և կապույտ աչքերով, ում անունն այդպես էլ չի բացահայտվել նա:

10-րդ դասարանցիները մեծ հպարտությամբ էին ներկայացնում մեծ հանձարիկ հայ իրականության և հայկական բեմի վրա: Մեծանուն հայ դերասան Վահրամ Փափազյանը Օթելլոյի դերում անկրկնելի էր:

Վշակերտները փոքրիկ բեմականացմամբ ներկայացրին «Ռոմեո և Ջուլիետ» պիեսից մի փոքր դրվագ, որը հուզմունք ու սրտաշարժ զգացմունքներ հաղորդեց հանդիսատեսին: Միջոցառման ողջ ընթացքում էկրանին ցուցադրվում էին տեսանյութեր՝ կապված Շեքսպիրի ծննդավայրի, նրա հիմնած թատրոնի, ստեղծագործությունների հետ:

5-րդ դասարանի աղջիկներն այնքան բնթշորեն, այնքան նազանքով էին ներկայացնում հրեշտակների պարը, որ ամեն մեկին պարուրել էին հոգեզմայլ հույզեր, իսկ պարը յուրօրինակ մի սեր էր մոր հանդեպ և ազդարարում էր մանկան ծնունդ:

Տոնական և գեղեցիկ այս օրն ուներ մեկ այլ խորհուրդ. 10-րդ դասարանի աշակերտուհի Մարիամ Առուշանյանի ծննդյան տարեդարձն էր: Ծափերի և ուրախ բացականչությունների ներքո բոլոր շնորհավորեցին նրան՝ մաղթելով մնալ միշտ այդպես համեստ, խելոք և գեղեցիկ:

Ապա աշակերտները ծաղիկներ նվիրեցին ուսուցիչներին:

Հիասքանչ միջոցառումը եզրափակեցին զինվորների կատարումները, և բարձր ու տոնական տրամադրությամբ ներկայանալով հեռացան դահլիճից՝ իրենց հետ տանելով ամենաքնքուշ զգացմունքներ:

Միջոցառումը, որի կազմակերպման համար ջանք ու եռանդ չէին խնայել աշակերտներն ու ուսուցիչները, մեզ հնարավորություն տվեց փոքր-ինչ ծանոթանալ Ուիլյամ Շեքսպիրի ստեղծագործություններին: Հանդգնված են, որ մեզանից շատերն այդ օրը որոշեցին ամպայման կարդալ հանձարի գործերից որևէ մեկը:

Կարինե ԲԱՆՇԻՅԱՆ

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա. Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում մշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը:

Դասապրոցեսի ընթացքում մենք՝ ուսուցիչներս, երբեմն սովորողներին մատուցում ենք մեղ առարկայական գիտելիքներ, դասը ստացվում է միատարր, որոշ աշակերտների հետաքրքրությունը նվազում է: Բայց երբ դասը կապում ենք այլ առարկայի հետ, բարձրանում է դասի նկատմամբ հետաքրքրությունը, խթանվում է աշակերտների տրամաբանությունը, վերլուծելու կարողությունը, համակարգված և ընդլայնված մտածողությունը: Աշխարհագրությունը իրենից արդեն իսկ ներկայացնում է տարբեր գիտելիքների համակարգ՝ լինելով բնագիտական առարկա, որն անհնար է պատկերացնել առանց ֆիզիկայի, քիմիա-

յի, մաթեմատիկայի և այլնի: Կան բազմաթիվ դասընթացներ, որոնք կարելի է անցկացնել ինտեգրված ձևով: Բնության երևույթները մեկ միասնական ամբողջություն են, և հասկանալու համար պահանջվում է միասնական մոտեցում. ուսումնասիրել դրանք այլ երևույթների հետ ունեցած իրենց բազմակողմանի կապերով և հարաբերություններով: Սովորող երեխան մեղ մասնագիտական բացատրությունից կմնա ճակարարված, քանի որ նրա մոտ առաջանում են զանազան հարցեր, որոնք դեռ բացահայտված չեն, և նա կորցնում է երևույթների միջև եղած կապը տեսնելու և համարժեք վերլուծություն կատարելու ընդունակությունը: Միայն ինտեգրված դասերն են տալիս ամբողջական պատկերացում բնության երևույթների մասին: Օրինակ՝ ինտեգրված դաս կարող ենք անցկացնել 5-րդ դասարանում, երբ ուսումնասիրում ենք մթնոլորտային տեղումներն ու երևույթները և շատ այլ թեմաներ: Այս դասերը պահանջում են ուսուցման կազմակերպման ժամանակակից մեթոդներ ու միջոցներ, որոնք նպատակին կծառայեն: Այս դասերին պատասխանելը պահանջում է ավելի խոր գիտելիքներ, այնպիսի նյութերի մատուցում, որոնցում արտացոլվի փոխադարձ կապը, ապահովվի անցումը մի առարկայից մյու-

սին: Օրինակ, երբ ուսուցիչը բացատրում է այդ երևույթների առաջացումը, բնականաբար, պետք է խոսի երկրի ձգողական ուժի մասին, իսկ 5-րդ դասարանի երեխան այն դժվար կյուրացնի, մինչև որ ուսուցիչը չներկայացնի Նյուտոնի գլխին ընկած խնձորի պատմությունը: Դասը կծառայի նաև աշակերտների ինքնավերլուծության զարգացմանը, կիթանի հետաքրքրությունը դեպի երկրի մոլորակը, ինչպես նաև զարգափար կտա տեղումների մասին:

8-րդ դասարանում պետություններն ուսումնասիրելիս նրանց աշխարհագրական դիրքը, բնական ռեսուրսները, բնակչության կազմակերպումները, բնակչությունը ներկայացնելուց հետո ուսուցիչը դասն ավելի հետաքրքիր դարձնելու համար պարտավոր է ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ երկրի պատմության զարգացման, ճարտարապետական կառույցների, ավանդույթների, թեկուզ հետաքրքիր խոհանոցի մասին: Պարզ օրինակ՝ ասենք թե ուսումնասիրում ենք Իտալիան: Միայն կլինի, եթե ուսուցիչը չընչի, որ Իտալիայի հետ են կապված այնպիսի հզոր անուններ, ինչպիսին են Լեոնարդո դա Վինչին, Ռաֆայելը, Պետրարքան, Ջ. Վերդին, Միքելանջելոն, Ստրադիվարիուսը և շատ ուրիշներ, որոնց մասին կարելի է ժամերով խոսել: Այդպես նաև ներ-

կայացնել ճարտարապետական կառույցները՝ Կոլիզեյը, Պիզայի թեք աշտարակը կամ պատմել Ռոմեոյի և Ջուլիետի սիրո պատմությունը և այլն:

Հարգելի՛ գործընկերներ, հավատացած եղեք, որ ձեր դասավանդման մոտեցումից է կախված երեխայի դաստիարակությունը դասին: Բոլոր ուսումնասիրվող պետություններն ունեն հետաքրքիր փաստեր, տեղեկություններ, որոնց մասին երեխան պետք է իմանա: Չասենք, 45 րոպե չի բավարարում: Դասագիրքն ընդամենը ուղեցույց է երեխայի համար, մենք պարտավոր ենք հավելյալ գիտելիքներ հաղորդել 21-րդ դարում ապրող երեխային: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիական միջոցներն այդ հնարավորությունն ընձեռում են:

Դասն առավել հետաքրքիր և արդյունավետ է, երբ մի առարկան համագործակցում է մյուսի հետ:

Սիրելի՛ գործընկերներ, լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ իմ ֆեյսբուքյան էջից:

Ձեզ շար սիրող՝
Լ. ԱՐՉԱՆԳՈՒՆՅԱՆ
Աշխարհագրության քաղաքային
մեթոդավորման նախագահ

ՈԱՋՄԱՍԱՐՁԱԿԱՆ ԽԱՂԵՐ

2019-ի ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ԱՐԵՎԻԿՆԵՐԸ

Մարտի 19-21-ը Ստեփանակերտում անցկացվեց «Արծվիկ» ռազմա-մարզական խաղերի հանրապետական փուլը: Շարային պատրաստություն, հրաձգություն, ավտոմատի ոչ լրիվ քանդում-հավաքում և պահեստատուփի լիցքավորում, քաղաքաշտպանություն, ֆիզիկական պատրաստություն մրցաձևերից իրենց ուժերը փորձեցին մայրաքաղաքի և շրջանների դպրոցական թիմերը: Եղանակային անբարենպաստ պայմանները խոչընդոտ չդարձան մրցումների բարձր կազմակերպվածությանը անցկացմանը: Եռօրյա մրցումներն ի հայտ բերեցին 2019թ. լավագույն արծվիկցիներին: Պարզևստի ման հանդիսավոր արարողությունը կատարեցին խաղերի կազմակերպիչներ՝ ԱՅ կրթության, գիտության և սպորտի ու պաշտպանության նախարարությունների և Արտակարգ իրավիճակների պետական ծառայության ներկայացուցիչները: Մրցումները հաջողությամբ ավարտելու կապակցությամբ մասնակիցներին շնորհավորեց և աջակիցներին շնորհակալություն հայտնեց ԱՅ ԿԳՄ ռազմա-հայրենասիրական և ֆիզիկական դաստիարակության և հանրության հետ կապերի բաժնի պետ Ստեփան Օհանջանյանը:

«Արծվիկ-2019» մրցումներում արդեն յոթերորդ անգամ հաղթող ճանաչվեց Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի թիմը: 2-րդ տեղը զբաղեցրեց Ասկերանի շրջանը ներկայացնող Իվանյան համայնքի միջնակարգ դպրոցի թիմը: 3-րդ և 4-րդ տեղերի համար պայքարող՝ Հաղուրթի շրջանը ներկայացնող՝ Տուճու և Շուշիի շրջանից



Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի թիմերը վաստակել էին հավասար միավորներ: Կանոնակարգի համաձայն՝ հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է հրաձգության արդյունքին: Ըստ այդմ՝ 3-րդ տեղը զբաղեցրեց Հաղուրթի շրջանը, 4-րդ տեղը՝ Շուշիի շրջանը:

ԿԳՄ նախարարության կողմից մրցանակային տեղեր գրաված թիմերը պարգևատրվեցին համապատասխան դիպլոմով, հուշանվերով, թիմերի անդամներն ու մարզիչները՝ դրամական պարգևով: Նրանք պարգևատրվեցին նաև ԱՅ պաշտպանության նախարարության կողմից:



հատական հաշվարկով 2-րդ տեղում է Մարտակերտի շրջանի Վանքի միջնակարգ դպրոցի աշակերտ Արմեն Մկրտչյանը, 3-րդ տեղում՝ Ստեփանակերտի հ. 11 դպրոցի աշակերտուհի Մանանա Ղազարյանը:

Ինչպես առաջին, այնպես էլ 2-րդ և 3-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցները պարգևատրվեցին դիպլոմով և դրամական պարգևով, հուշանվերով: Նմանապես պարգևատրվեցին մյուս մրցաձևերով անհատական հաշվարկով լավագույն ճանաչված արծվիկցիները:

Հարային պատրաստությունից՝ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի աշակերտուհի Անուշ Եսայանը, քաղաքացիական պաշտպանություն մրցաձևից՝ Մարտունու շրջանի Հերիերի միջնակարգ դպրոցի աշակերտ Կարեն Գրիգորյանը, ֆիզիկական պատրաստությունից՝ Հերիերի դպրոցից Օքսանա Փարամազյանը, հրաձգության մրցումներում լավագույն է ճանաչվել Շահունյանի շրջանից Քարվաճառի միջնակարգ դպրոցի աշակերտ Ռոմա Ֆահրադյանը:


Լավագույն ջրկի հրամանատար է ճանաչվել 11-րդ դպրոցի արծվիկների հրամանատար Տիգրան Հայրիյանը:

Քաղաքացիական պաշտպանություն մրցաձևից 1-3-րդ մրցանակային տեղերը գրավեցին, համապատասխանաբար, Հերիերի, 11-րդ ավագ, Իվանյան համայնքի դպրոցների թիմերը: Նրանք արժանացան արտակարգ իրավիճակների պետական ծառայության պարգևներին:

Մրցանակակիր թիմերը պարգևատրվեցին նաև ԱՄՄ կողմից:

1-ին տեղ գրաված հ. 11 ավագ դպրոցի և 2-րդ տեղ գրաված Իվանյանի միջնակարգ դպրոցի թիմերն ապրիլին Երևանում կմասնակցեն «Կորյուն» ռազմամարզական խաղերին: Անցած տարի մասնակցել էին 11-րդ և Հերիերի դպրոցները և 16 թիմերի մեջ համապատասխանաբար գրավել 2-րդ մրցանակային և 4-րդ պատվավոր տեղերը:

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ ԱՐՄԵՆ ԱՄԻՐԲԱՐՅԱՆԻ ՀԻՇՆԱԿԻՆ



Արմեն Ա մ ի թ - բարյա - նը մեկն է այն հ ա գ ա - ր ա վ ո թ ք ա ջ ո թ դ ի ն է - րից, ով - ք ե թ ի թ ե ն ց կյանքը դրեցին հայրենիքի փրկության զոհասեղանին: Մարտի 18-ին կլրանար նրա ծննդյան 50 տարին: Քաջողորմ նվիրված արիության դաս անցկացվեց նրա հարազատ կրթօջախում՝ Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի 7-րդ «ա» դասարանում: Ներկա էին հերոսի հարազատները, դասընկերներն ու մարտական ընկերները, ուսուցիչներ, շեֆ զորամասի զինվորներ:

Ուսուցչուհի Կարինե Դադայանի համար և՛ հեշտ էր, և՛ դժվար դասը վարելը. հերոսը նրա դասընկերն էր: Եվ հուշերն ակամայից պատվում էին նրա ու զոհված նրա մյուս դասընկերների շուրջ. դասարանի 11 տղաներից վեցը նահատակվել են Արցախյան պատերազմում: Եվ նրանցից յուրաքանչյուրի հիշատակի համար դասընկերներով հավաքվում են, ինչպես այդ օրը՝ մարտի 18-ին՝ խնկարկելու Արմեն Ամիրբարյանի 50-ամյակը:

Դասարանի մուտքի մոտ հերոսին նվիրված անկյունն ամփոփում էր նրա անցած կարճ, բայց արժանափառ կյանքի ու-

ղին: Բազմաթիվ գովասանագրերն ու պատվոգրերը խոսում են տարբեր ասպարեզներում նրա ունեցած հաջողությունների մասին: Աշակերտների կողմից պատի թերթ է լույս ընծայվել քաջորդու հիշատակին՝ «Մենք ուզում ենք նմանվել նրան» խորագրով, որտեղ զետեղված են այսօրվա յոթերորդիցիներից մեկի՝ Ալեքսի բանաստեղծությունները: Ի դեպ, դասի ընթացքում աշակերտները նաև արտասանեցին իրենց դասընկերոջ հայրենասիրական բանաստեղծությունները:

«Մենք ուզում ենք նմանվել նրան»՝ նաև արիության դասի նշանաբանն էր, և դասն անցավ այդ ոգով: Այն սկսվեց հայոց մայրերին նվիրված երգով, որը խորհրդանշում է ամեն ինչ:

«Անկախությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն, որից հրաժարվող ժողովուրդները բարոյապես դատապարտվում են չգոյության».

Երեւոյան այս և մյուս իմաստություններով համեմված դասին ուսուցչուհին աշակերտների գիտակցությունն էր հասցնում այն, որ յուրաքանչյուրիս բարձր պարտականությունն է պահել, պաշտպանել այն անկախությունը, որը ձեռք է բերվել հայոց ազատամարտի զոհերի արյան գնով: Իսկ օրվա հերոսի մասին պատմեցին իրենք՝ երեխաները:

Արմեն Ամիրբարյանը ծնվել է 1969թ. մարտի 18-ին Ստեփանակերտում: Հաճախել է հ. 2 միջնակարգ դպրոցը: Սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: Ձինվորական ծառայությունն անց է կացրել Բելոռուսիա-

յուն: Ձորացրվելուց հետո, ուսումը շարունակելով հեռակա, զինվորագրվել է հայրենիքի պաշտպանությանը, անդամագրվել թիվ 1 վաշտին: Մասնակցել է Շահունյանի, Հաղուրթի շրջանի գուղերի պաշտպանությանը, Խոջալուի, Մարտակերտի շրջանի գյուղերի ազատագրական ու պաշտպանական մարտերին: Ձեռնվել է 1992թ. մայիսի 8-ին Ջանհասանում: Հետմահու պարգևատրվել է

էլ անհամբեր դրան էին սպասում, որ Արմենը օգնի իրենց: Իր հարուստ գիտելիքներն Արմենը երբեք չէր ցուցադրում, չափազանց համեստ էր, պարտաճանաչ, նրա յուրաքանչյուր խոսք փիլիսոփայություն էր: Հերոս ընկերոջ մասին երկար կարող էր խոսել դասընկերուհին, բայց հուզմունքը խանգարում էր, և նա խոսքը փոխանցում է Արմենի մարտընկերոջը: Հայրապետ Մուսայելյանն այն անձնավորությունն է, որը մինչև վերջին պահը եղել է Արմենի հետ: Միշտ անբաժան էին: «Մաքուր, արդար, ընկերասեր, խելոք տղա էր: Գնում էինք Ջանհասանի օպերացիային, հակատանկային ակամր ընկերներից մեկն էր տանում: Ծանր էր: Արմենը նրա ձեռքից վերցրեց, ասելով՝ այս ակամր բոլորիս համար է, ոչ միայն քո, ու սկսում է ինքը տանել: Նրան հետևելով՝ բոլորս հերթով տանում էինք»,- միասին անցկացրած պատերազմական օրերից պատմեց մարտական ընկերը, ապա շարունակեց,- երբ ասում են իմացյալ մահը անմահություն է, միշտ Արմենն է գալիս աչքիս առաջ: Նա միշտ պատրաստ էր դրան»:

Իսկ ուսուցչուհին շարունակում էր աշակերտներին բացատրել ապրողների առաքելությունը. մենք ազգովի այսօր զինվոր ենք



ամեն մեկս մեր գործով. աշակերտն իր լավ սովորելով, նահատակների հիշատակը հարգելով, մեծերն՝ իրենց պարտականությունները լավ կատարելով:

«Մայրերի ափի մեջ պետք է փնտրել ազգերի ճակատագիրը». Նժդեհի այս խտացումը հայ ժողովրդի դարավոր պայքարի պատմությունից է ծնվել, որն արհիական է և այսօր: Արմենի մայր Լաուրա Ամիրբարյանը հազարավոր հայ քաջածին մայրերի օրվա խտացումն էր: Աշակերտների խոնարհումին ի պատասխան՝ նրանց մաղթեց խաղաղ երկինք, հերոսանալու առիթներ գիտություն, երկիրը շենացնելու ուղորդներում: Արտահայտեց իր հպարտությունը Արմենի նման որդի դաստիարակելու համար և շնորհակալությունը երեխաներին, դպրոցի մանկավարժական կոլեկտիվին, որդու ընկերներին, որ միշտ հիշում և մեծարում են նրան, իսկ ծնողներին երբեք չեն մոռանում:


Դասն ավարտվեց դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանի ջերմ խոսք-կոչով. ապրել Արմենների, Վարդանների, Բեկորների, Ավուրների, մյուս հերոսների գաղափարներով և դրանք կյանքի կոչելով: Իսկ Ալեքսի բանաստեղծության այն տողը, թե մենք հող չունենք թուրքին հանձնելու, բոլորի սրտից է բխում՝ մեր ամենաբարձր դեկավարից մինչև այս հողի վրա ծնված յուրաքանչյուր ոք. քանզի այդ հողը շաղախված է սրբազան արյամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄՊՈՐՏԸ ԵՎ ՄԱՐՏԱՐԿԵՍԱՆԸ՝ ԿՅԱՆՔԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Պուր ցկատե՞լ եք, որ այն մարդիկ, ովքեր պարբերաբար զբաղվում են սպորտով, կարող են պարծենալ ոչ միայն ամուր առողջությամբ, այլև ուժեղ բնավորությամբ: Այդ ի՞նչ է ամուր սպորտը մեր օրգանիզմի հետ, որ մենք ձեռք ենք բերում բնավորության ուժեղ գծեր, դառնում ենք ավելի հավասարակշիռ, բարի ու համբերատար: Շատերը վստահ են, որ սպորտը մարդուն տալիս է միայն ֆիզիկական զարգացում, բայց դա թյուրիմացություն է: Գոյություն ունեն սպորտի զանազան տեսակներ, որոնցից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ ազդեցությունն ունի բնավորության վրա:

Վերջին տասնամյակում Արցախում սպորտն սկսել է զարգանալ մասնավորապես միջազգային մրցաշարերում մեր մարզիկների հաղթանակների հաշվին: Շատերի մոտ սպորտը զուգորդվում է մրցաշարերում հաղթանակներ գրանցելու հետ: Այս պատկերացումը հետին պլան է մղում սիրողական սպորտը, առողջ ապրելակերպը, իրական ինքնապաշտպանությունը: Սպորտն ու մարտարվեստները միայն մրցաշարերը չեն եւ ոչ էլ մկաններն ու մարզական ձգվածությունը, դրանք կյանքի լավ ուսուցիչներ են յուրաքանչյուր պարապողի կյանքում: Ասվածի մեջ ավելի լավ համոզվելու համար հարցազրույց ունեցանք տարբեր մարզածեւերում իրենց դրսևորած արցախցիների հետ: Յուրաքանչյուրը պատմելով իր մարզածեւի մասին՝ կարելորեց ոչ թե մրցումներին մասնակցելն ու հաղթելը, այլ մարմնի ու հոգու առողջությունը, ներքին աշխարհի զարգացումը, կյանքի համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերումը:



Արամ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ Արցախում հայտնի մարզիչ է, որի շնորհիվ ավանդական կարատե-դոմարտարվեստն արմատավորվեց մեր հայրենիքում, զարգացավ ու մասսայականացավ: Նա պարապել սկսել է 29 տարեկանից: Պատմում է, որ երբ նոր էր սկսել պարապել, Երեւանում սեմինարների էր գնում հայտնի վարպետի մոտ: Յետեւելով իր 55-ամյա ուսուցչին, որը շատ արագ ու թեթեւ էր կատարում կարատեի շարժումները, սկսեց Արամ Գեւորգյանը մտածում էր՝ արդո՞ք իրեն կհաջողվի հասնել այդ աստիճանին: Հիմա փորձառու մարզիչ, սեւ գոտի 4-րդ դաս վարպետը՝ սենսել Արամը 54 տարեկան է եւ հիմքեր ունի պարծենալու առողջության լավ վիճակով, մտքի եւ մարմնի ճկունությամբ, շարժումների արագությամբ: Տիրապետելով մարտարվեստի գաղտնիքներին ու նրբություններին՝ երբեւէ չի օգտագործել դրանք մրցաշարերում, բայց կիրառում է կյանքի փորձություններն անցնելիս՝ շրջանցելով հիվանդություններն ու այլ վտանգներ: Խոսելով մարտական արվեստի մասին՝ մարզիչն իմաստուն մեկնաբանություն տվեց, որ գիտությունը մարմնի համար է պետք, իսկ արվեստը՝ հոգու: Արվեստի բոլոր ձեւերում, լինի նկարչություն, պար, քանդակագործություն, արտահայտվում է ստեղծագործ միտքը: Մարդն օժտված է ստեղծագործ մտքով, պարզապես պետք է ուշադրություն դարձնի Աստծո կողմից տրված տաղանդին, ճիշտ եւ նպատակային օգտագործի կենսական էներգիան: Երիտասարդ հասակում, հատկապես մինչեւ 40 տարեկանը մարդու մոտ ակտիվ է մկանային էներգիան, 40-50 տարեկանում ակտիվ է ներքին էներգիան, որը կարելի է կարգավորել ճիշտ շնչառության միջոցով, իսկ 50-ից բարձր տարիքում ակտիվանում է մտավոր էներգիան, որը, սակայն, չի գործում նախորդների բացակայության կամ չմարզելու դեպքում: Մարզված մարդու գիտակցությունը տարբերվում է սովորական մարդու գիտակցությունից: Անկախ նրանից, մարզիկը մասնակցում է մրցաշարերի թե ոչ, պարապմունքների ընթացքում ստացած գիտելիքներն ու փորձը բավական են՝ գիտակցելու, թե ինչ կարող է նրան սպասել փողոցում, հատկապես փողոցային մարտում: Ուստի հազվադեպ կարող են հանդիպել մարզիկներ, որոնք վեճի կամ կռվի կբռնվեն: Իսկական մար-

զիկը պահանջ չունի իր ուժն ապացուցելու: Նա մաքուր է պահում հոգին ու մարմինը, կարողանում է հաղթահարել հույզերը: Մարզիչն ըստ կարելորության դասակարգեց այն կետերը, որոնց ուշադրություն են դարձնում պարապմունքների ժամանակ: Առաջին տեղում առողջությունն է, այնուհետև՝ ճիշտ տեխնիկան ու ինքնապաշտպանությունը, հետո՝ մրցույթները: Մարզիկը պետք է ճիշտ սննդակարգ ունենա, չծանրաբեռնվի մրցույթների նախապատրաստությամբ: Մարզիչը կարող է չմասնակցել մրցաշարերի, բայց մարզիչն է հաղթանակի ուղին ցույց տվողը, առաջնորդը: Ինչպես նաեւ մարզիչն է այն խրատատուն, որը սաներին չի պարտադրի դառնալ չենսպիտակներ, բայց նրանց մեջ լավ մարդ կդաստիարակի: Արամ Գեւորգյանը մարդու առողջության կարգավորման հարցում առանձնահատուկ կարելություն է տալիս սպորտին եւ ֆիզկուլտուրային՝ դրանք գերադասելով զանազան թանկարժեք դեղամիջոցներից: Բերում է օրինակներ, որ, մարտարվեստի սկզբունքներից բխող իր խորհուրդները կատարելով, դրական փոփոխություններ են նկատվել առողջական խնդիրներ ունեցող որոշ մարդկանց մոտ: Դա ճիշտ սննդակարգն ու ֆիզիկական ակտիվությունն են, հասարակ ֆիզիկական վարժությունները, որոնք ունեն նաեւ բուժիչ բնույթ: Ինչպես ինքն է նշում, եթե բոլորն ընտրեն առողջ ապրելակերպի այս միջոցը, ապա շուտով դեղատները կփակվեն: Փոխարենը անհրաժեշտ են ավելի շատ մարզադահլիճներ եւ բանիմաց մարզիչներ: Ավելի զարգացած երկրներում, ինչպես օրինակ՝ Լեհաստանում, որտեղ զարգացած է սպորտը, իսկ մարդկանց առողջության մակարդակը բարձր է, ավելի շատ ու նպատակային մարզական ակտիվներ են գործում, որտեղ մարդիկ մարզվում են առողջական լավ վիճակ պահպանելու համար: Մեծ ուշադրություն են դարձնում բազմաարկ շենքերի առաջին եւ նկուղային հարկերը մարզասրահներ դարձնելու վրա, որոնք անվճար տրամադրվում են պարապողներին, իսկ մեզ մոտ ավելի շատ են խանութները, գրասենյակները: Սենսելը կոչ է անում բնակչությանը՝ ավելի շատ զբաղվել մարմնամարզությամբ, սպորտով եւ մարտարվեստներով, պահպանել ֆիզիկական ակտիվություն: Ինքը պատրաստ է աջակցել բոլոր դիմորդներին: Պարտադիր չէ դառնալ չենսպիտակներ, կարելոր է լինել չենսպիտակ որպես մարդ:

Հաջորդ մեր զրուցակիցը 29-ամյա Արմեն ՊԵՏՐՈՍՅԱՆԸ է, որը 15 տարեկանում սկսել է պարապել սանդա ուշու եւ թայնույ մարտարվեստներ: Ինչպես եւ հասակակիցներից շատերը, նա էլ իր մանկության ֆիլմերից ծանոթ լինելով չինական մարտարվեստներին՝ բաց չթողեց սի-



րած ֆիլմերի հերոսների կերպարն ընդօրինակելու եւ Արցախում տարածում ստացած մարտարվեստի պարապմունքներին մասնակցելու հնարավորությունը: Շարունակաբար պարապելով՝ Ա. Պետրոսյանը վերհանել է իր բանաձեւը, որն ամենեւին էլ չենսպիտակ կոչմանը հասնելը չէ: Պրոֆեսիոնալ սպորտով զբաղվել, իհարկե, սովորեցնում են դրա համար նախատեսված հատուկ խմբերում, բայց չէ՞ որ սպորտը միայն հակառակորդի հետ մրցակցելը չէ, առաջին հերթին դա ինքը թեզ հետ մրցելն է: Ֆիզիկական լավ վիճակում լինելու եւ ինքնազարգացման համար պարտադիր չեն ծանրաբեռնված գրաֆիկով պարապմունքները, բավական է գտնել լավ մարզիչ, որն իր լավ վերաբերմունքով համապատասխան ուղղորդում կտա: Արմեն Պետրոսյանը գտել է լավ մարզիչ՝ հանձին Սայաթ Բաղդասարյանի, որի մոտ սկսել եւ շարունակում է իր պարապմունքները: Վերջին երեք տարում Ա. Բաղդասարյանի գլխավորությամբ զբաղվում է վիճակում մարտարվեստով: Արմեն Պետրոսյանի տեսակետը սպորտի եւ մարտարվեստների շուրջ գրավիչ է տարբեր առումներով: Մարդը, որն անմիջական հարաբերության մեջ է սպորտի եւ մարտարվեստի հետ, գովասանքի է արժանի իր կարգապահության համար: Ընդ որում, կարգապահությունն արտահայտվում է ոչ միայն մարզիկի արարքներում ու գործողություններում, այլև արտացոլվում է ամենուրեք: Այդ մարդիկ սովոր են ապրել պարապմունքների խիստ գրաֆիկով, հետեւապես կյանքում էլ գործում են համակարգված: Պարապելու ցանկությունն արդեն իսկ ավելի որակյալ կյանք վարելու առաջին քայլն է: Դա վճռակա՞նություն է ու առաջ գնալու ձգտում, որն անդրադառնում է կյանքի մյուս ոլորտներին: Կարելորդ՝ ամեն ինչ կատարել սրտով: Պարապմունքները հնարավորություն են տալիս դրսևորվել կուլեկտիվում, ոգեւորվել համախոհների շրջանում, լինել այնպիսին, ինչպիսին կաս: Լավ հնարավորություն է տարբեր տեղեր այցելել խմբով, ստանալ դրական հույզեր: Վիճակումի տեխնիկական սովորեցնում է հակառակորդի ուժն օգտագործել իր դեմ, հաստատուն մնալ տեղում: Այն հեշտ չի յուրացվում, բարդ է ու կոպիտ, բայց նաեւ սովորում են չնահանջել դժվարության առջեւ. սա պետք է գալիս կյանքում: Պարապմունք առ պարապմունք մարզիչը մեկնաբանում է ամեն մի շարժման իմաստը՝ բացահայտելով նրբությունները. այդպես սովորում են վստահել ու համբերել նպատակին հասնելու համար: Ուժեղանում է ոգին: Կարելի է ասել, մարզիկը հաղթում է ինքն իրեն: Այս կարելոր հատկությունները ձեռք բերելուց հետո բացվում է ճանապարհը դեպի հաղթանակներ: Մարզիկը կարող է որոշել՝ ուր՞ան է մասնակցել առաջնությունների, թե ոչ:

Մեր հերթական զրուցակից Արմեն ՀԱԿՈՔՅԱՆԸ ծնվել է 1974թ.: Սկսել է մարզվել խորհրդային տարիներին, դպրոցական հասակում: Շարունակաբար դրսևորելով առաջադիմություն՝ ընդգրկվել է մարզական տարբեր խմբակներում թեթեւ աթլետիկա, բասկետբոլ, շախմատ



մարզածեւերից: Թեթեւ աթլետիկայի մարզիչի հորդորմամբ ընդգրկվել է այն ժամանակ գաղտնի գործող կատարելի խմբակում եւ երկար ժամանակ մարզվել: Սիրելով մարտարվեստը եւ լինելով ընդունակ մարզիկ հասակակիցների շրջանում՝ Ա. Հակոբյանը սկսել է մարզվել նաեւ բոքսով ու ըմբշամարտով: Պարապմունքներից մեկի ժամանակ ծնկի վնասվածք ստացավ: Ըմբշամարտը նրան շատ էր դուր գալիս, բայց հասկացավ, որ վնասվածքավտանգ այդ մարզածեւում երկար պարապել չի լինի: Մարզումները շարունակում էր ոչ թե չենսպիտակ դառնալու համար, այլ մարզական ճանապարհը դիտարկելու էր որպես ինքնազարգացման լավագույն միջոց: Ինչպես նշում է, խորհրդային տարիներին հասարակությունն էր առաջատարը. յուրաքանչյուրը մտածում էր ոչ թե անձնական հաղթանակի, այլ հասարակությանը պիտանի լինելու մասին: Սպորտը կարգապահություն է, օգտակար սովորությունների ձեռքբերում, որն արտահայտվում է մարզվողի ձգտումների, աշխատանքի, հարաբերությունների մեջ: Մարզված լինելն Արմեն Հակոբյանին օգնել է բանական ծառայելու ժամանակ: Առաջին հերթին առանձնապես էր ֆիզիկական լավ տվյալներով: Բացի դրանից, կազմակերպված և կենտրոնանալու ունակություն ունեցող, ինքնապաշտպանվելու սովոր մարզիկն արդեն զինվոր է, որը դժվարություններ չի ունենա ծառայության ժամանակ: Բանակից հետո էլ չի դադարել մարզվել: Ներկայումս նախապատվություն է տալիս սիրողական ֆուտբոլին. հաճախակի թիմերով խաղում են: Նրա համար սպորտը ֆիզիկական լավ վիճակ պահելն է, մարզական ազարտ, հոգու զբաղմունք է: Ա. Հակոբյանը կարելորում է սպորտի դերը ազգի եւ մատաղ սերունդի զարգացման հարցում: Իր որդուն կիոկուշին կատարելի պարապմունքների է տանում ոչ թե չենսպիտակ դարձնելու ակնկալիքով, այլ առողջ մեծանալու եւ կարգապահ մարդ լինելու համար: Մրցումներին էլ պետք է ձգտել, դա լավ մոտիվացիա է մարզիկի համար, բայց սպորտում եւ մարտարվեստում գլխավորն ինքնակատարելագործումն է: Սպորտում ստացած վնասվածքները կարող են շրջադարձային դեր խաղալ պրոֆեսիոնալ մարզիկի կարիերայի վրա, դրանով կտորել նրան: Ուրեմն՝ պետք է զարգացնել առողջ ոգին առողջ մարմնում: Արմեն Հակոբյանի կարծիքով՝ պետությունն ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնի ոչ միայն մրցույթների մասնակցող եւ հաղթող մարզիկներին, այլև առհասարակ մարզված սերունդ ունենալուն, ինչը ռազմավարական նշանակություն ունի երկրի համար: Այսպես թե այնպես, սպորտը եւ մարտարվեստները շարժում են, իսկ շարժումը կյանք է: Արժեք վերանայել սեփական հայացքները, արմատախիլ անել վնասակար սովորությունները, ընտրել այնպիսի զբաղմունք, որը կնպաստի ոչ միայն ամուր եւ սլացիկ կեցվածք ունենալուն, այլև ամբողջությամբ կյանքի որակին:

ՀԱՅԿԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՇՈՒՇԻ ԵՏԽՆՈՒՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2018Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ Շուշիի տեխնոլոգիական համալսարան Հիմնադրամ:
2. Հիմնադրամը գրանցված է ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի կողմից:
3. Գրանցման համարը՝ 44316012377:
4. Վկայականի համարը՝ 02 Ա N003603:
5. Գրանցման ամսաթիվը՝ 26.01.2016թ.:
6. Գտնվելու վայրը՝ ք. Շուշի, Աշոտ Բեկորի 4, հեռ. 047731022, քջջ.՝ 097299294, կայք shushitech.am, էլ. Փոստinfo@shushitech.am:
7. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ Ռեկտոր Հովհաննես Վաչեի Թոքմաջյան, 2018թ. հաշվարկած աշխատավարձը՝ 10141600 ՀՀ դրամ:
8. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝ Արայիկ Վլադիմիրի Հարությունյան Ալավիկ Արմինիկ Ասրյան

Արամ Սերգեյի Մխոյան
Կարեն Ալեքսանդրի Շահրամանյան
Արտակ Արտյունի Բեգլարյան
Արմեն Յուրիկի Սարգսյան
Կարեն Արմոնի Ներսիսյան
Գագիկ Միքայելի Բաղունց
Ռուդոլֆ Գերասիմի Իսրայելյան
Վասպուրակ Սմբատի Կարապետյան
Սեյրան Ալեքսանդրի Շահնազարյան
Սարիբեկ Բարդուղի Գալստյան
Նվեր Ալբերտի Միքայելյան
Գևորգ Գագիկի Վերանյան
Ռոբերտ Միսակի Հարությունյան
Լևոն Գագիկի Գրիգորյան
Արտակ Արթուրի Սարգսյան
Սամվել Ռաֆայելի Մինասյան
Գրիշա Ստեփանի Նարինյան
Ջորի Չարքյազի Մուսայելյան
Հոգաբարձուների խորհրդի 9 անդամներ համար 2018թ. ընթացքում հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ՝ ընդամենը 32 557 100 դրամ:

6. Աշխատակազմը՝ 284 հոգի, աշխատավարձի ֆոնդը՝ 601075829 դրամ:
7. Իրականացված ծրագրերը՝
7.1 Կրթական ծրագիր (միջին մասնագիտական, բուհական և հետբուհական),
7.2 Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և տեխնիկական հսկողություն,
7.3 Գյուղատնտեսական մթերքների մշակում և արտադրություն,
7.4 Բարեգործական նպատակներով սեփական արտադրանքի և գյուղմթերքի մվիրատվություն,
7.5 Գյուղերի արտոնագրում,
7.6 Էլեկտրաախտորոշիչ նոր սարքի գրանցում և արտոնագրի ստացում:
8. Ֆինանսավորման աղբյուրները՝ ԱՀ պետական բյուջե՝ 628657913 դրամ, վճարովի ուսուցում՝ 17653,075 դրամ, գյուղատնտեսական մթերքի իրացումից՝ 1883829 դրամ, սեփական արտադրանքի իրացումից՝ 3384224 դրամ, եկամուտ դիպլոմների տրամադրումից՝ 1160583 դրամ, հատույթ առարկայական տարբերություններից, ընդունելությունից, ակադեմիական տեղեկանքներից՝ 1909617 դրամ, անհատույց ստացած եկամուտներից՝ 800000 դրամ, այլ մուտքեր՝ 71601186 դրամ:
9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 942332065 դրամ:
10. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ընդհանուր չափը՝ 942332065 դրամ:
11. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտը իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ առողիք:

Ռեկտոր
Գլխավոր հաշվապահ
Մ.Ա.Օստոյան
21 մարտի 2019թ

ԱՆՎԱՍՏ ԱՌՈՒՊՏՈՐԻ ԵԶՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի 2018թ. ղեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Աուդիտ Պրո
ԱՀ, ք. Ստեփանակերտ Վ. Մամիկոնյան 29/6
+3747 959575
www.auditpro.am

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի ղեկավարությանը
Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2018թ. ղեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության հիմնական դրույթները:
Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2018 թվականի ղեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքն ու դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՀՀՄՍ-ներ):
Կարծիքի հիմք
Մենք աուդիտի անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի (ՀԷՄՍ կանոնագիր) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջներ՝ համաձայն ՀԷՄՍ կանոնների:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:
Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը:
Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղե-

կավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք: Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:
Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար
Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն ամբողջությամբ վերցրած՝ զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ՄՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալ կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամուտք են կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազմեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝
• հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
• ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
• գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների

պատրաստման համար հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտքությունը:
• եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելուն, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը:
• գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ԱՌՈՒՊՏ ՊՐՈ» ՓԲԸ
Արսեն Կիմի Կապուրյան
Տնօրեն
Անուշ Մարտիրոսյան
Աուդիտոր

Տպագրության և ներկայացվել 2019թ. մարտի 21-ին

ԿՈՐԵԼ Է
Արսեն Կիմի Կապուրյանի AA N 902835 3-րդ կարգի տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի վկայականը՝ տրված Ստեփանակերտի գյուղատնտեսական քոլեջի կողմից՝ 03.08.2006թ.:
Համարել անվավեր:

ԳՐԱԿԱՆ ԷՋ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բորիկ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

Նոր անուն



Փոքրամարմին, բայց իրականում առույծասիրտ շնորհալի այս երիտասարդը մերօրյա հե-րոս է, որը 2016-ի ապրիլին ժամկետային զինծառայող էր և զենքը ձեռքին կրում էր Մաստաղի-սի դիրքերում: Ցվետանա Պասկալան «Նվիրյալները» շարքի մեջ հաղորդումը նվիրել է նրան, նրա և հարևան դիրքի քաջորդիներին: Բորիկ Բաղղասարյանը ծնունդով Արցախի Հանրապե-տության Մարտունի քաղաքից է: Ծնվել է 1997 թվականի մարտի 3-ին՝ զինվորականի ընտանի-քում: Բազմազավակ ընտանիքի (2 քույր և 4 եղբայր) 3-րդ զավակն է: Ավարտել է Մարտունու հ. 1 միջնակարգ դպրոցը, ստացել է նաև երաժշտական կրթություն տեղի երաժշտական դպրոցում: Երբեմն երաժշտություն է գրում:

Ազատ ժամանակ սիրում է զբաղվել նաև մուլտիպլիկացիոն նկարչությամբ: Ստեղծագործում է դարոցական նստարանից: 14 տարեկանում գրած նրա բանաստեղծու-թյունը մրցամակի է արժանացել ստեղծագործական մրցույթում: Այժմ ԱրՊՀ ուսանող է: Ինչպես ինքն է ասում, գրիչն իր ամենամտերիմ ընկերն է, որի հետ նա կիսում է իր մտքերն ու մտածու-մերը: Ներկայացնում ենք երիտասարդ ստեղծագործողի բանաստեղծություններից մի փունջ:

Ես տեսել եմ լուսություն, որ պայթյունից ուժեղ էր հնչում, Ու ծիծաղ եմ տեսել, որ ողբից շատ ցավ էր թաքցնում, Տեսել եմ մեղավոր աչքեր, որ ամենաարդարն էին, Վախեցած մարդիկ, որ բոլորից խիզախ էին, Կշտամբող խոսքեր, որ վաղուց ներել էին, Շքեղ հագնված մարդիկ, որ հոգով չքավոր էին Եվ չքավորներ, որոնց խոսքերը թևավոր էին...

Այնքան հակասումներ ունի կյանքը... Հաճախ խաբուսիկ է առաջին հայացքը, Մահացու հարվածը լավագույն ընկերոջ կարող է հասցնել, Ոխերին թշնամիդ՝ անդունդի եզրից թեզ փրկել: Ժամանակն է ամեն ինչ իր տեղը դնում, Ուղղակի կյանքը այնքան կարճ է, Որ համբերությունը շռայլություն է թվում՝ Ոչ բոլորս կարող ենք մեզ թույլ տալ, Շտապում ենք...

Հենվում ենք բանականության, զգացողությունների վրա, Ժամանակից առաջ ենք փորձում ընկնել, Չենք նկատում այն, ինչ կարևոր է այնքան (Պարզապես խորն է), Տեսնում ենք այն, ինչ երեսին է դրված (Շատ հաճախ՝ երեսին գրված), Վերջինս ավելի մեծ հաճախականությամբ լինում է սուտ, Ու հենց այստեղ է, որ սխալվում ենք, Շտապելու համար վճարում ենք կոտոշներ մեր ճակա-տին՝

Կյանքի փոցից ստացած, Արնահոսող վերքեր մեր սրտին՝ Մխալներից գործած: Դուք կասե՞ք՝ հետո՞ ինչ, դրանից մարդ չի մեռնում, Իսկ հավա՞տը, վատահոլությունը, հոգի՞ն... Չէ՞ որ մարդը զգացմունքներով է մնում կենդանի, Դրանց կորուստը մի փոքր մահ է կյանքի, Մի մեծ քայլ անզգայացում դեպի...

Ինչ իմանաս ով ինչ ճանփով է անցել, Ծիծաղի դիմակի տակ ով ինչքան վիշտ է թաքցրել, Չոր աչքերը ինչքան լացող հոգիներ են սքողել, Իսկ Նա՝ երանելին օտարների համար, Գուցե այնքան էլ երջանիկ չէ... Ամեն մեկը իր պատմությունն ունի, Ու երանելի են միայն նրանք, Ովքեր տառապել, բայց չեն չարացել, Ովքեր խաբվել, բայց անհավատ չեն դարձել, Դժոխքով անցել՝ հոգին դրախտի պես մաքուր են պահել, Հազար անգամ հիասթափվել, ու նորից հրաշքի են սպա-սել...

Մի խոսքով, երանի բոլոր նրանց, ովքեր չեն տենչացել դառնալ հերոս, Այլ նախընտրել են պարզապես մնալ ՄԱՐԴ:

Իմ հոգում այսօր գարունն է ծաղկել... Նրա բուրմունքից ու թարմությունից Սիրտս է արթել, թևերս՝ բացվել, Գիշեր-ցերեկս իրար խառնվել...

Ես՝ փառավորված ու ծաղկավորված, Գարնան նոր լույսով, շնչով պարուրված, Գարնանավորված, Նրա զմրուխտե թելերին բազմած, Անթիվ ծաղիկներ թևերիս առած, Գարուն ավետող երգը շուրթերիս՝ Ծնված երփներանգ, վառ ծաղիկների Ձինջ աշուկներից ու թերթիկներից, Խիտ թփուտներից ու նորաբողբոջ, կանաչ ծառերից, Գարուն բաշխեցի գարնանակարոտ բոլոր սրտերին ու հոգիներին...

Ծաղկային լեզվով, թռչնակի երգ ու անուշ դայլայլով, Մարդկային ցերմ ու բարի հույզերով Գարուն սիրեցի ու գովերգեցի... Գարուն ապրեցի:

Գարուններս աշուն դարձան, Երբ գնացիր, անխոս, անձայն ու... հեռացար: Վառ օրերն իմ՝ թեզնով լցված, Մռայլվեցին ու դավակացան... Իսկ հուշերս, ա՛խ, բաժանման ու լքումի, Վառվեցին ու փոշիացան... Քո բուրմունքը՝ դարձած օդս, թթվածինս, Հոդս ցնդեց, անեացավ... Տերեկներս՝ արեաշող ու լուսավոր, Աչք փակելով օրվա վրա, Դարձան մռայլ, մութ գիշերներ Ու խուճապան...

Բաժանումդ, թեկուզ խոցեց սիրտս՝ ներող, անհիշաչար, Ինձ թեատեց մի պահ, այո, բայց չկորոցեց... Ժամանակի հետ այդ ցավը անտանելի անզգայացավ, Եվ խոցերս վերքեր դարձան, սպիացան... Իսկ, այ, սի՛րտս, Աստված վկա, Թեկուզ խոցվեց ու դառնացավ, Բայց թեզ ատել, կամ փնտվել ու անիծել, Երբեք... երբեք նա չփորձեց, Ատելության խաչն իր վրա բնավ կրել նա չփորձեց... Հավատո՞ւմ ես, բաժանումիդ վրա իր գույգ աչքը փակեց: Ու սիրելու համար նա թեզ ժամանակին Իր մեջ ո՛չ թեմ, ո՛չ ոխ պահեց: Մի՛ գարնացիր, այո, սեր իմ, Սիրող սիրտս թեզ լուռ ներեց: Ի պատասխան քո բաժանման, Ներումը իր նա թեզ բաշխեց:

Հուշերիս մեջ մի աղջիկ, Ձեռքին վարդի մի փնջիկ, Ինձ է կանչում անընդհատ՝ Իր մեղմ ձայնով դյուբակա՛ն...

Պարուն է նո՛ւրբ, նազանքով, Կախարդում իր երգերով, Գերում ինձ իր խե՛նք սիրով, Պատում հոգիս եւ ջերմությամբ, զգվանքով, Եվ ցնծությամբ, հրճվանքով...

Ձինջ աչքերի անմար լույսով, Աստվածային ժպիտով Կյանքիս անգույն, գորշ էջերը Ձարդարում է, գունեղ ներկում Ծիածանի վառ գույներով:

ԲՆԱԶԴ

Գիշերվա կեսին հեռախոսի զանգից նա վեր թռավ: Քթի տակ դժգոհելով՝ տղամարդը սեղմեց հեռախոսի միացման կոճակը: (Դեռ մանկուց նրան շատ դժվար էին արթնացնում: Նման դեպքերում նա աչ ու ձախ լուտանքներ էր շարկում:) Կողքին լսվում էր կնոջ հան-գիստ շնչառությունը: Ինչ-որ մեկը հեռախոսի մյուս ծայրից ասաց. «Նա մահացավ»: Այո, նա սպասում էր, չէ՞ որ մայրն արդեն ծեր էր ու հիվանդ: Նա փորձեց հիշել վերջին անգամ երբ էր գյուղ գնացել: Տղամարդն ուղղվեց տե-ղում. մթության մեջ հայացքը կանգ առնելու կետ էր փնտրում, բայց բնագործ թափ է առ-նում երակների մեջ, սրտի խփոցներից քա-րացած՝ մթության մեջ ստվերվում է լույսի մի կտոր ու սկսում շարժվել՝ իր հետեւից ձգելով տեսաժամպավենատիպ մի լուսավոր շերտ: Մայրս... մայրս... Արցունքի մուլեզմած կոհակ-ները լվանում էին ժամանակից շուտ աննկատ ծերացող նրա դեմքը: Նա ձեռքերով սրբում է երեսը, բայց մատները լողում էին աղի արցունքների հորձանքում: Նրա ճշգրից կինը գարթեց: Լուրը չցնցեց նրան. մեծ կին է, սպասում էին: Նա լույսը վառեց եւ անակնկա-լի եկավ ամուսնու տեսքից: Անկողնու մեջ կո-րացած, կիսանստած ու ծալած ոտքերն ամուր գրկած ցնցվող ու շնչառեղ լինող մի կլոր մարմին, որն ամենեւին մնան չէ այն մե-

կին, որի շնչառությունը տարիներ շարունակ զգացել է իր կողքին: Կինն արագ հագնվեց. պետք է տեղեկացնել: Վաղ առավոտյան քարտուղարուհին կրունկների ամենօրյա կտկտոցով ներկայա-ցավ իր վերադասին եւ հայտնեց նրա վարոր-դի մոր մահվան լուրը: Վերջինս սեղանին դրված թղթակտորներից մեկի վրա գրեց «Ար-տակարգ իրավիճակ» ու մեկնեց տխուր դեմք ընդունած աշխատակցին: Չմոռացավ ան-պայման դնել չակերտների մեջ: Գրությունը հասավ տեղակալին: Մեկ ժամ անց հեռախո-սով զեկուցեցին. «Ամեն ինչ հրահանգված է: Թաղում՝ ժամը 12-ին»:

Նույն օրը երեք բեռնատար մեքենաներ մայրուղուց թեքվեցին դեպի Ոստան գյուղը: Գյուղ մտնող մեքենաների աղմուկից բոլորն զգաստացան: Նրանք կանգ առան Վարդուշ տատի տան մոտ: Մեկը քայլում էր բակում՝ գլուխը կախ: Մահացածի եղբոր որդին էր, որն այցի էր եկել հորաբորոջ եւ նրան գտել մահացած: Քիչ անց ծառայողական իր մեքե-նայով ժամանեց որդին՝ կնոջ հետ, իսկ երե-խաները չկարողացան գալ: Մեկն աշխատում էր, մյուսը Ծաղկաձորում հանգստանում էր: Երբ գլուխը դրել էր մահացած մոր կրծքին, բնագործ եղբոր մորից զգացնել տվեց իրեն: Այդ ընթացքում եւ տունը, եւ բակը լցվեցին մարդ-

կանցով: Նրան մի կերպ պոկեցին սառած մարմնից եւ պառկեցրին կողքի սենյակում: Նա չէր կարողանում մտածել, գլուխն ասես փշալարերով պարուրված լիներ: Դրսում ար-դեն աշխատանքի էին անցել «Արտակարգ իրավիճակի» բանվորները: Նրանք անգիր գիտեին իրենց անելիքները. ամենաառաջի-նը՝ փողոցը մաքրել, լուծել լույսի հարցը, դր-սի պատերը ներկել, դարպասը ներկել (ծա-ղիկների, ծաղկեպսակների ու դազաղի հար-ցերով նրանք չէին զբաղվում), չմոռանալ մեկ մետրի վրա շարել հենց նոր գործարանից հանած պղքամանները... Այս ու այն կողմ վազող բանվորների աշխատանքի եռուզե-րից, դեռես փաթեթավորված աղբամանների «ներկայությունից» շփոթված գյուղացիները նեղվում էին նույնիսկ իրենց տեսքից: Պատի տակ մտածած ծեր մայրերը լուռ մայում էին այս ամենին, եւ Աստված գիտի, թե նրանցից յու-րաքանչյուրի մտքով ինչեր էին անցնում...

Ավելի ուշ ժամանեց երկրորդ խումբը: Մե-քենայից իջեցվող ծաղկեպսակներն ու դա-զաղն այնպիսի շուքով էին տեղավորում, որ մի պահ ամբողջ գյուղը հայտնվեց նրա ստվե-րի տակ ու այնքան խեղճացավ, որ լսելի էին միայն բանվորների շշուկները. «ամենաթանկ դազաղն է», «տեսնես քանի են տվել», «տես է, Ոսկանյանն էլ է ծաղկեպսակ ուղարկել»...

Շշուկներ էին լսվում նաեւ հաջորդ օրը, դիա-կի շուրջը հավաքված գյուղացիների մեջ. «Ասում են՝ էս ամենը տղայի շեֆն է արել», «Տես ինչ պատիվ ունի է՞»: Մեկը լացելով ձայ-նը բարձրացրեց. «Այ Վարդուշ, երանի թե աչ-քերդ բացես, տեսնես ինչ որդի ունես»: Հար-սը լուռ մտտել էր. նա չի սիրում, երբ մահացա-ծի մոտ լաց են լինում, դա իրեն վայել չէ, եւ հետո էլ այս հետամնաց գյուղում ինչպես բա-ցատրես, որ հանգուցյալին պետք է «ցիվիլ ճանապարհել»:

Մեքենաների երթով Ոստան գյուղի 83-ամյա Վարդուշ տատիկին տարան գերեզմա-նոց: Երբ պարաներով դազաղն իջեցնում էին փոսի մեջ, մի ահեղի բղավոց լսվեց... Որ-դին էր: Մարդիկ դազաղը հետ դրեցին փոսի կողքին: Նա չէր բղավում, նա ոռնում էր եւ այդ ձայնից դողում էին շրջակա լեռները: Նա չէր մտածում, ինչպես չի մտածել իր ամբողջ կյանքում, բայց կու՛չ է գալիս բնագործի հասց-րած հարվածներից, որոնք նույն հնչեղու-թյունն ունեին, ինչ դազաղը գամող մեխերը... Հետո բոլորը ծիծաղում էին այդ տեսարա-նի վրա, անվանում այն «չինձու», «ձեւակա-նություն», «ցուցամուկություն» եւ այլն: Բայց ոչ մեկի մտքով չէր անցնում, որ դա ամենաի-րականն էր այդ ամբողջ ցուցադրության մեջ:

Սիրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

Ստեփանակերտ, Գ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեքերունների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վա-րելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3100: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 30.03.2019թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: